Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Z-47

39805-63

891.99
Լ-47 Դարբինյան Ա.
Արնուտ

ՄԻ	1183	Կ/Հ	80

ԱՐՏԱՇԵՍ ՂԱՐԻԲԵԱՆ

- 8 NOV 2011

ՄՈՄՈՒՌ

ՌԱՆԱՄԱՏԵՂԾԱԿԱՆ ՊՆՋԻԿ

ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Դարեր ծաղկու՝ արքորոշ ոչքով
Դարդը շատ է ու Մրուռուռ
Դարդու ծաղկու ֆոփուկ ոչքով
Երգը շատ է ու ոչխար...

1902 թ. 17 Մարտ.
Նպարտ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ Ն. ՅԱԿՈԲԵՆԿՈՅԻ
1904

891.99
Լ-47

891.99
Հ-47
N-2150

ԱՐՏԱՇԷՍ ՂԱՐԻԲԵԱՆ

«Հիշատակութիւն, հիւսուած Թաւուշ կիրակի Տիգրանակերտի։ 10/XIII. 1906թ. Հ.Հ.Մ.

ՄՌՄՈՒՌ

64

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՓՆՋԻԿ

Հ.Հ.Գ.

ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Ղարիբ մարդու քընքուշ սրտի
Դարդը շատ է ու Մրռմռուռ,
Դարդոտ մարդու փափուկ սրտի
Երգը շատ է ու տրխուր...

1902 թ. 17 Մարտի.
Ղպտր։

2003

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904.

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Պետական Գրադարան
Ս. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԱՆՎԱՆ
Ереван, Маяковского
7/XI. 1922

19.06.2013

40806

Доз. цензурою. С.-Петербургъ, 1-го Іюня 1904 гс.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. անվան Մասնիկյանի անվան
39805-63

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

ՕՐ. ՄԱՐԻԱՄԻԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԸ

Քեզ եմ նուիրում, ով անկեղծ ընկեր,
Իմ անվարժ գրչիս առաջին տողեր...

5-5 ② с (подлежит.)

ՈՐՔԱՆ ՈՒԶԵՑԻ...

Որքա՜ն ուզեցի մի ալ-վարդ քաղել,
Որ բուրմունքի հետ փրշեր չունենար,
Որքա՜ն ցանկացայ սրրտանց ծիծաղել,
Որ ծիծաղիս մէջ վիշտը չը խաղար...
Որքա՜ն ուզեցի մի երգ յօրինել,
Որ կրրծքէս ուրախ ու զրւարթ թրռչէր,
Որքա՜ն ցանկացայ մի կոյսի սիրել,
Որ իր կրրծքի տակ օձեր չը պահէր...

Վարդն առանց փրշի ինձ չը պատահեց,
Որքան մօտեցայ ծեռներս ծակեց,
Ծիծաղից յետոյ միշտ դառը լացի.
Ծիծաղն առանց վիշտ երբէք չրդդացի...
Երգրս մրռմուռի հեծեծանք դառաւ
Ու այրւած սրրտէս այնպէս դուրս թրռաւ,
Կոյսն էլ ինձ սիրեց—յետոյ ուրացաւ,
Երբ ինձնից հարուստ փեսայ ունեցաւ...

1903 թ. 1 Օգոստոսի.
Ղզլար.

5-5, ⑧ 16, авав → с.
(в сб-к) соц-фил. лит.

***

Օ՜, հեռու ինձնից, ահարկու օրհաս, *)
Ես այժմ ապրե՞լ, գործել եմ ուզում,
Կեանքը ինձ համար չէ ցնդող երազ.
Ես այժմ սիրել, տանջուե՞լ եմ ուզում...

Կեանքը փուշ չունի՛, խաչը ծանր չէ՛,
Ով որ սիրում է, պաշտում է մէկին,
Իղձերը վառ են, յոյսը մարած չէ՛,
Ով զիտէ անձը զոհել իր ազգին...

Ազգ՝ որ դարերով տանջանք է կրել
Իր արիւնշաղախ վաթանի համար,
Ազգ՝ որ դարերով արիւն է թափել,
Որ դեռ զոհ կուզէ, զոհեր անհամար...

1902 թ. 14 Յուլիսի.
Ղզլար։

5-5, ④ 12, ձեռ
(?) ուսչ-ոգի.

*) Հետևեալ ոտանաւորները տպուած են „Տարազ" շաբաթաթերթում, „Աղբիւր" ամսագրում, „Շերակ" պատի օրացոյցի և „Զգացմունք" ժողովածուի մէջ։

Ծանօթութ. Հեղինակի։

ՄՕՐՍ ՑԱՒԻՐ

(Տիկին Սոֆիա Ղարիբեանցին)

Լուսնեակն ելէր կը շողշողա,
Նրշխուն սարեր, բալէս ուր ա.
Աստղերն արդէն կը փրլփրլան,
Օտար բալէս ուր է, չ'կայ...

Անուշ քամի, ուրդից կուգաս,
Եարաբ բալիս դու չտեսա՞ր.
Ախ՜ մութ ամպիկ էդ ուր կերթաս,
Ախբը տղիս մօտով չանցա՞ր,

Չէչ չրսա՞ւ, թէ ես մէր ունիմ.
Մարմանդ քամի, համբոյրս տար,
Չիմի կուլա ինձի համար.
Սիրուն ամպիկ, բարևս տար...

Բալիս դարդից կեանքս մաշուեց.
Ազիզ որդի, ա՞խ կը մեռնեմ,
Փափակ սիրաս երւա՞ւ, խաշուեց,
Քո կարօտը ուսմից առնեմ...

1899 թ.
Բալախանի։

4-4, ④ 16 ձեռ
(գր. Ուսանող) "գրած"

ՄՕՐՍ ԿԵՆԱՑԸ

Գ. Ճեմարանի 25 ամիակին.

Եղայր իմ, ընկեր, բաժակդ վերցրու,
Վերցրու, միասին խմենք մի կենաց,
Խմենք Թանկագին մեր Մեծ Մայրիկի
Անուշ կենացը մենք ծունկ խոնարհած...

Այն սուրբ խորանի, ուր որ կապուեցաւ
Մեր մատաղ ուխտը... Եղբայր, ասացինք,
Թող այսուհետև սրտերս միանան,
Իսկ դրան վկայ մենք համբուրուեցինք...

Վերցրու բաժակդ, համբուրենք կրկին
Անուշ Մայրիկի այս տօնախմբին.
Եւ երգ երգելով դոչենք բարձրաձայն
Թող յաւէտ կեցցէ՞, կեցցէ՞ ճեմա-
ր ա ն...

1899 թ. 25 սեպտ.
Բալախանի։

5-5, 4 12, хаха → с

ՄԱՅՐԻԿ, ՀԵՐԻՔ Է...

Նուէր մայրիկիս.

Մայրիկ, հերիք է, սրբոց նետ դընես,
Կամ թէ դրբացին թղթեր գրել տաս.
Դրանք չեն լինի իմ դարդին դարման.
Իմ ցաւը ջո՞ւկ է, իմ վիշտը՝ եամա՞ն...
Իմ վէրքը խո՞ր է, վիշտս անհամար,
Երգս աղու է, դէմքս դալկահար
Վէրքիս մրմունջից անքուն դիշերներ
Թափել եմ աղի արտասուաց շիթեր...

Վէրքս դու տուիր կենսատու կաթով
Ու մեղմ օրօրով յաճախ ականջիս
Միշտ դու երգեցիր բիւրաւոր ցաւը,
Բիւր սև վշտերը ցաւագար աղջիս...
Եւ մոռացեցիր դու այն ժամանակ.
«Թող վառուի սիրտը իմ սիրուն բալի,
«Թող նրա սրտում կայծեր բրռընկուին
«Աղջի դարևոր վըշտից արնալի...»
Այժմ կայծերը դառել են հրդէհ.
Վառում է սիրտս կրբակն ամէհի,
Քո «Թիլիսմայով» էլ հէչ չես կարող
Դեղ ու ճար անել իմ սրտիս վառուող

Քանի չէ լսում անդարդ դեղջուկի
Անհոգ հորովելն վար-ցանքս անելիս,
Քանի հայ աղջիկ ազատ ապահով
Չէ երգում ուրախ կամը քըշելիս,
Էլ ե՞րբ կ'մարի կրակը սրտիս,
Էլ ե՞րբ կը տեսնես իմ դէմքին ժիժաղ,
Էլ հէչ չի՛ կարի արցունքս աչերիս,
Էլ երբէ՞ք սիրտս չի զարկի խաղաղ...
Մայրիկ, հերիք է սրբոց նետ դընես,
Կամ թէ գրբացին թղթեր գրել տաս,
Դրանք չեն լինի իմ դարդին դարման.
Իմ ցաւը ջո՞ղ է, իմ վիշտը՝ ե ա մ ա ն...

1899 թ. 19 Յուլիսի.
Բագու։

5-5 (8) + (24) 32
ãbãb c
(поправка — майери)

ԳԻԺ-ԲԱՍԱԽԻ ԱՓԻՆ

Պարզ գիշեր է... անթիւ աստղեր
Ջինջ փայլում են կամարում,
Եւ դիւթական, չքնաղ տաղեր
Երկրի համար հընարում...

Ցաժրում խորունկ ծորի մէջից
Գիժ-Բասախը մենաւոր
Փրփուր բերնին ժէռ-ափերից
Գանգատւում է ամեն օր...

Աստղերի հետ յուժկու ձայնով
Ծառերի խիտ ըստուերում,
Երգ է երգում մրընչելով
Ու աշխարհին ցաւն ասում...

Պղտոր կրծքից փրփուր թքում
Կրուիւ մղում, շառաչում,
Նեղ ափերից ազատութիւն
Եւ ազատ կեանք պահանջում...

Բայց ափերը միշտ քա՞ր, միշտ նե՞ղ,
Անդութ, դաժան, բրնակալ—
Ուղղքն՝ յուժկու, կուրն՝ ահեղ,
Գետը՝ ըմբոստ, խելագար...

1895 թ. 30 սեպտ.
Օշական։

4-4/4-3 (4) 20 abab
(прозода - ср. Тарон? Шахдаг... և օշկին ոգկրանում)
стереотип

ՀՈՎԵՐՆ ԸՆԿԱՆ...

Հովերն ընկան, զովերն եկան,
Արեգակը մէր մրտաւ.
Մ՚խ, էս ճամբէն շատ երկար էր,-
Սիրտս անուշ քուն մրտաւ...

Էդ հովերու, զովերու դէմ
Կուրծքիս բացի, ծրծեցի,
Անո՞ւշ, անո՞ւշ հայրենիքիս
Համն ու հոտը ըզդացի...

Ու էն քար-քանդ բեկորները,
Փարն ու հողը սրբազան,
Նրկարուեցին աչքիս առաջ,
Եկան կարդ-կարդ շարուեցան...

Ծաղիկները թառամած են
Եւ դաշտերը ամայի...
Ես ծունր իջած համբուրում եմ,
Լիդում հողը հայրենի...

1900 թ. 4 Հոկտեմբերի.
Կալագերան։

4-4/4-3 (4) 16 хаха
(~ песнь гарибa(?) ср. Исаакян)
стиль народ.

ԵԱՐՍ

Կուժը ուսին, վարդը թշին
Եարս եկաւ դէ՚ն, սարեր,
Շարմաղ երես, ժպիտ դէմքին
Եարս եկաւ... ջան սարեր...

Ջուր ուզեցի, ինձ ջուր տուեց,
Էն ի՞նչ անուշ, համով էր.—
Պաչ ուզեցի—ա՞խ, չը տուեց,
Էդ ի՞նչ հրպարտ սիրող էր...

1900 թ. 13 Հոկտ.
Մարտ։

4-4/4-3 (4) 8 a(r)b a(r)b
(любовн. народн. стиль.) ~ Исаакян

Ռ. Ա.Զ.-ԻՆ

Ահա իմ ծեռքը, ընկեր Թանկագին,
Դու սեղմիր ներքան.
Ահա և սիրտս, տրխուր, Թախծագին,
Սփոփիր ներքան...

Կոշտ կրծքիս վերայ, գլուխդ դրած
Սրբտիս հետ խօսիր,
Նա քեզ կը պատմէ և վիշտ, և տանջանք,
Լռիկ արտասուիր...

1902 Թ. 11 Փետր.
Ղզար։

5-5/5 (4) ձախաձ
(ցրյուսակ)

* * *

ՕՐ. Մ.-ԻՆ

Ով չէ սիրում, նա չէ ապրում
Կեանքի մէջ,
Սէրը կեանք է, սէրը վարդ է
Փշրի մէջ...

1902 Թ. 10 Մայիսի.
Ղզար։

4-4/3 4 խաչա
(ե.ս-ս) (փոսս.հոսա)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՆԵՐԻՑ

Մութը հասաւ, զովը ընկաւ,
Նրստած էի ծառի տակ,
Անուշ Մարօս գիրկս եկաւ,
Սէրբս շողաց կրծքիս տակ...

Աստղ ու լուսին ապուշ կտրած
Մեղմ նայեցին վերևից,
Շաղաղ վարդը ալ կարմրրած
Լուռ հեկեկաց նախանձից...

Մէկ Մարօխս ծէնը զընգաց,
Որպէս սիրուս արծագանք,
Մենակ հրա երգը թընդաց.—
Նա սէր երգեց ու տանջանք...

Խօսք չը գտայ բան ասելու,
Լուռ նայեցի աչքերին—
Եւ սէ՛ր, և կեանք պարգևելու
Նա պատրաստ էր իր եարին...

1902 թ. 13 Մայիսի.
Ղզար.

4-4/4-3 (4) 16 aba՝
(нар. мотив)
любов,

* * *

Ես կոկոն եմ թառամած,
Դու, եղեմը փափկութեան,
Դի՛ր ինձ կրծքիդ ամօթխած,
Այնտեղ ապրեմ յաւիտեան:

Արցունքովդ ջրիր ինձ,
Եւ թո՛ղ բացուեմ քո կրծքին...
Օ՜, ես այնտեղ էլ երբէ՛ք
Չեմ թառամի, իմ անդին...

1902 թ. 16 Յուլիսի.
Ղզար.

4-3 (4) 8 տողեր
(любов. тина нар.)

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-ում ССР
Ա. Մյասնիկյանի անվան
им. А. Мясникяна

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Էլի էն այգում, էն ծանօթ այգում
Շրջում եմ մենակ, ուր երազեցի,
Ուր զարունքի հետ, կանաչի գրկում
Սիրոյ վառ, չքնաղ, երգեր հիւսեցի...

Փոխուել է այդին... Թաց գետնին թափուած
Դեղին տերևներն կեանք են ազերսում—
Փոխուել եմ և ես... Սրրտէդ հալածուած,
Քեզնից դեռ էլի սէր եմ երազում...

1902 թ. 1 Հոկտ.
Ղզլար։

5-5 (4) 8 տող
(? 6 մ-ա) (օգոստ, ոսկեմ)

ՕՐ. Ե.-ԻՆ

Կրրակի շուրջը տեսայ Թիթեռին
Ուրախ խաղալիս,
Ու մի քիչ յետոյ բոցերի միջին
Լուռ այրրուելիս։

Տեսայ և կոյսին սիրատենչ սրրտով
Մէկին սիրելիս,
Բայց սիրած եարից սէր չը դտնելով,
Դառն արտասուելիս...

1903 թ.
Ղզլար։

5-5/5 (4) 8 տող
(փոսոտ, ոսկեմ)

ԵՍ ՄԵՌՆՈՒՄ ԵՄ...

Ես մեռնում եմ, սիրուն մայրիկ,
Ցաւոտ սրտով խոցոտուած,
Գերեզմանս մօտ է, մայրի՛կ,
Մրռայլ ու մութ, խաւարած...

Սէր կայ սիրտս, իղձ դեղեցիկ,—
Նրպատակիս չը հասայ,
Սիրոյ նեռից, նրշխուն մայրիկ,
Խոցոտուեցայ ու ընկայ...

Ես որ մեռնեմ՝ դառը սուգով
Թափէ արցունք լալագին,
Սգի՛, լեգի՛ արտասուքով
Երգէ սիրոյս մեղեդին...

Օ՜, ես գիտեմ, էն անդութն էլ
Կրգայ արցունք թափելու,
Էն արցունքն է, ազիզ, մայրի՛կ,
Սար-դարդերըս հալելու...

1900 թ. 1 Ապրիլ.
Բալախանի։

4-4/4-3 (4) 16 տող
(ոգբ. կարմ. к матери
о ней)

ԸՆԿԵՐԻՍ

Մ. Ազ.-ին։

Օտար երկրում, հեռու քեզնից
Ես զարիբ եմ, կը տանջուեմ,
Գիշե՛ր-ցերե՛կ, սրրտիս ցաւից
Տրխո՛ւր, տրրտո՛ւմ, կը կանչեմ...

Մատաղ սիրտս օր չը տեսած
Ցաւով, վշտով էրուեցաւ,
Կոկոն կեանքս դեռ չ՚ծաղկած
Թրփից հեռու չորացաւ...

Այստեղ չունիմ, իմ սիրական,
Սրրտիս մօտիկ բարեկամ,
Որ ցաւերս պատմեմ նրան,
Սիրտս իջնի, հովանամ...

Գիշերները ասողերի հետ
Կուզեմ ողբալ իմ ցաւեր,
Բայց նոքա էլ շատ անդութ են,
Վայ, իմ սիրտս, ջան աղբէր...

Անտէր ցաւը սիրտս խոցեց,
Օ՜, ընկեր ջան, շուտ հասի՛ր,
Գուցէ մեռնեմ, չը տեսնուինք,
Շիրմիս քարը համբուրիր...

1998 թ. 28 Նոյեմբ.
Բալախանի։

4-4/4-3 (4) 20 տող
(ոգբ. կարմ. գրիչ
ոսկ. ծրագ)

ԴԺԲԱԽՏԻ ԳԱՐՈՒՆԸ

(Գիւղացու մրմունջներից)

Կէս գիշեր է... Ու երկնքում
Ժուռ է գալիս վառ լուսնեակ,
Մեղմիկ քամին սիրտս է ծեծում,
Սիրտս լուռ է, աւերակ...

Գարունն եկաւ... ծառով, ծաղկով
Մեր վաթանը զարդարուեց,
Տարիքս անցան լացով, կոծով,
Սիրտս ուրախ չը զարկեց...

Սիրուն ծիծառն էլի եկաւ,
Քանդուած բունը կարկատեց,
Մենակ եարս էլ ետ չեկաւ,
Բալիս քաղցած նա թողեց...

Օտարութիւն... Զուլում անուն—
Իմ դուշմանս չը տեսնի,
Մէջ, խեղճ եարս օտար, անտուն,
Գուցէ հացի փող չունի...

1899 թ. 9 Մարտի.
Բագու

4-4/4-3 (4) 16 տող

ԵՍ ՍԻՐԵՑԻ...

Ես սիրեցի՝ շանթի փայլը,
Ամպի գոռոցն ահռելի,
Ահեղածայն, յորդ անձրևի
Մեծ տարափը սոսկալի...
Ես սիրեցի տխուր սրգով
«Ախր-վախը» դետակի,
Ալիքների անդուսպ կրքով
Ափին զարկը կատաղի...

Ես սիրեցի՝ մրմունջ, լացը,
Տանջուող, թշուառ գիւղացու
Արնոտ սրբտի դարդ ու ցաւը,
Նրա երգը խիստ ազու...
Ես սիրեցի մութ կրնեիոր
Կոյս աղջկայ ճակատին,
Նրա սրբտի հառաչանքը
Անուշ սիրոյ խոր վրշտի...

Եւ այդ շանթը, ամպը ահեղ,
Ցորդ անծրեւը սոսկալի,
Ալիքների ձայնը զօրեղ,
Մրմնջնջ, լացը դեղջուկի,
Կոյսի սրրտի հառաչանք, սէր,
Սրրտիս խորքը կաղմրկեն,
Ու սրրտիս մէջ խորունկ խոցեր
Պինդ հարուածով կը ճեղքեն...

1900 Թ. 28 Յուլիսի.
Բալախանի։

4-4/4-3 (3) 24 ապան

ԴԱՐԱՎԵՐՋԻՆ

Դարմ էլ անցաւ... Մայրիկ, ցաւերդ
Էլի սիրարդ է կրրծում,
Կենաց վէրքէդ կաթ-կաթ արուն
Սև շիթերով է ծորում...

Բրժիշկները չեկան քեզ մօտ,
Քո վէրքերիդ դեղ չարին,
Որդիներիդ հառաչանքին
Նոքա ականջ չը դրրին...

Հեռու տեղում մենք քու դարդով
Տապակուեցինք, Մայրիկ ջան,
Օտար, անտուն թափառելով
Մենք չը դրտանք ապաստան...

Մենք էլ մաշանք... Ա՜խ, անդութներ,
Տրուէք մօրրս դեղ ու ճար,
Դուք չէ՞ք լրսում նրա ձայնը,
Որ բռնել է ողջ աշխարհ...

Նա երկունքի՞, ցաւի մէջ է,
Դայակ, մօտիկ դու դրնա՛,
Շուտ դեղ արա նրա ցաւին,
Թող նա ցաւով չը մրնայ...

Տրէ՛ք նրան մի քիչ էլ կեանը,
Թող մանուկը զօրանայ,
Անխիղճ դայակ, դեղ տուր շուտով,
Թող խեղճ Մայրս լաւանայ...

1899 թ. 25 Դեկտ.
Բալախանի։

4-4/4-3 (4) 24 ՀՀ

ՂԱՐԻԲԻ ԳԱՐՈՒՆԸ

(0)

Վայ իմ օրին, գարուն կու գայ,
Սիրտս գարունն ի՞նչ անի,
Օտա՞ր հողում, դարիբ տեղում
Վրշտիս գարունն ի՞նչ անի...

Մօրս Թողի սև դարդի մէջ,
Քուն ու դադար էլ չունեմ,
Տունը՞ս այրեց կրրակն անշէջ,
Աշխարհի մէջ տեղ չունեմ...

Կեանքի ծովում, դարդի ծոցում
Ծաղիկն ինչի՞ս սաղ կու գայ,
Սիրտս ծածկուեց սիրոյ խոցում,
Գարունն ինչի՞ս սաղ կու գայ...

Գարուն Թող գայ քրդի բէգին,
Որ տուն քանդի աշխարհում,
Գարուն Թող գայ սև-աչիկին,
Որ սիրտ խոցի աշխարհում...

Վայ իմ գլխին, դարիբ տեղում
Սիրտս գարունն ի՞նչ անի,
Կեանքս մաշուեց օտար հողում,
Վրշտիս ծաղիկն ի՞նչ անի...

1902 թ. 16 Մարտ.
Ղզլար։

4-4/4-3 (4) 20 ՀՀ

Է՞Ն ԳԻՇԵՐԻՆ

Է՞Ն գիշերին, լուռ գիշերին
Մեժ կռիւ կար էս դաշտում,
Արիւնոտ դաշտ, իմ խեղճ եարին
Դո՛ւ ես պահել քո սրրտում...

Էս սարի տակ, լեռան կրծքի՞ն
Եարս ընկաւ գընդակից,
Թէ՞ ծաղկանց մէջ առուի ափին
Ընկաւ անդութ ձեռքերից։

Շրջիկ քամի, դու կիմանաս,
Ո՞ւր է պառկել իմ քաջը,
Կամ թէ հրտեղ արձակեց նա
Վրշտի վերջին հառաչը...

Շիրմի տեղը դուք ցոյց տուէք,
Ալ-ծաղիկներ արցունքի,
Ես լամ պիտի... Ախ, խղճացէք,
Դուք, վրկաներ սև-սուգի...

1901 թ.
Նոր-Բայազետ։

4-4/4-3 (4) 16 ձեռագիր
(հրատ. ոչ ամբողջական
մեծությամբ)

Ո՞Հ, ԼՌԷ՛, ՍՈԽԱԿ...

Ո՞հ, լռէ՛, Սոխակ, աւեր դաշտերում
Քո զիլ երգերը էլ լրսող չը կայ...
Մի՞թէ չես լսում ողբ են մրրմրնջում
Խուլ գիշերներին լեռները հրսկայ...
Մեր խեղճ աշխարհում խորունկ ցաւերի
Վէրքն է մխում, աղի արցունքի
Հեղեղը վազում... Հառաչ մայրական
Եւ խաղաղութիւն լռւռ, նուիրական...
Ո՞հ, Թրշուառ սոխակ, էլ ի՞նչ ես փնտրում
Սև ծորերի մէջ, ուր մահն է իշխում,
Ուր վայրագ քամին մի խորունկ գաղտնիք
Թևերին առած փրչում է մեղմիկ,
Ուր ցաւն է անխօս, ուր վիշտը հանգած,
Ուր արիւնն է ծով, դաշտերը՝ մարած,
Գիշերը՝ խաւար, գետերը անձայն,
Ուր մեր կրսկրծից լեռները հեկքուան...

Անցիր, խեղճ Թռչնիկ, էլ մի վրդովիր
Խաղաղութիւնն այդ սև, համատարած.
Ո՞հ, լռէ՛, սոխակ, էլ մի խռովիր
Լուռ շիրիմները սուրբ նահատակաց...
Դու վարդ ես փնտռում, շուշան շողշողուն,

Վառ-արշալոյսի գոյներ փայլփլլուն,
Սէր ես որոնում, կամ բուրմունք ծաղկի
Եւ կամ հայելին մաքուր վրտակի...
Թռիր, սիրելիս, երգի՛ր դու այնտեղ,
Ուր դեռ չէ մրտել սև մահը ահեղ,
Ուր դեռ փրթթում է ալ-վարդը բացուած...
Ա՜խ, մեր վաթանում, արիւնն է մրխում
Եւ բոսորային ծիրանի հագած
Համբ կետակն է ափերը քերում...
Մեր սև սրրտերէն արուն կը կաթէ,
Ո՜հ, լռէ՛, սոխակ, էլ հէջ մի՛ երգէ...

1901 թ. 29 Սեպտ.
Նոր-Բայազետ

5-5, (16) 32, abab, c

ՀԱՅ ԱՇՈՒՂԻՆ

Նուէր Ա. Ահարոնեանին.

Երգէ, հայ աշուղ... երգդ տխուր է.
Մեր սիրտն էլ վրշտի սև խանձարուր է...

Այս դառն օրերին, խուլ դիշերներին
Մեղ ողբ յօրինիր... Թող մէկիկ-մէկիկ
Թափուեն աչքերէս ալի արցունքներ,
Թող նրանք քամուեն շիթերով մանրիկ,
Որպէս աշունքուայ անծրևի կաթեր...
Մեր սուր կրսկիծը, մեր վէրքը խորունկ
Քո սրրտի մէջը Թող կրակ վառեն,
Մեր խոր վրշտերը, մեր լացը ծածուկ
Թող քո վեհ հոգին վրէժով այրեն...
Երգէ, հայ աշուղ, երգդ սիրուն է,
Մեր սիրտն էլ, եամա՜ն, գունդ-գունդ
արուն է...

Ոլորուն երգդ Թող ա՜ուշ հընչէ,
Որպէս մրմունջը վրշտացած ոգու,
Թող նա լաց լինի, մեղմիկ հառաչէ,
Որպէս հեծեծանք լացող ուռենու...
Մեր սիրտն է եարայ, մեր արցունքը՝ քար,
Մենք հալանք, մաշանք անդուԹի Թրրից,

Մեր վրրէժը խոր, իսկ լեղուն տրկար,
Մենք կրրակու�էնք անյաղ զայրոյթից...
Ա՜խ, մենք արտասուել, մենք ողբալ կուզենք.
Երգի՛ր, ա՛յ աշուղ, մեզ քրնքուշ տաղեր,
Կրրակն է վառման, մենք հովնալ կուզենք,
Երգի՛ր, Հայ աշուղ, մեզ անուշ խաղեր...
Մեր սև վաթանէն, արնոտ ծորերէն
Շուտ արա, աշուղ, մեզ մի խապար տուր,
Մրռայլ դաշտերէն, աւեր տրներէն
Մեզ մի բան պատմէ... Թող լինի տրխուր...
Գովիր, այ աշուղ, երկնային լեզուով
Սուրբ հերոսների ոսկորներն անթաղ,
Պատմիր, Հայ աշուղ, թէ ինչպէս նոքա
Անէծք կարդալով՝ ըկան լո՜ւռ, դանդաղ...

Երգիր, Աղպէր ջան... Երգդ վրշտո՞տ է...
Մեր վառման սիրտն էլ երգի կարօտ է...

1901 թ. 4 Նոյեմբերի
Նոր-Բայազէտ։

5-5 (2) + (11) + (20) + (2) = 35
C + x + n + c | C
n.

* * *

(Ալաշկերտական ընկերիս)

Քե՛զ, ով իմ ընկեր, քեզ պիտի այժմ
Դաւաճան կոչեմ, որ մի ժամանակ
Մենք կապուած էինք վառ դաղափարով,
Որ ուխտում էինք՝ Թշնաւառին սիրել,
Մի նրպատակով դերեզման իջնել...
Ի՜նչ վսեմ իդձեր, փայլուն միտումներ
Զէին աղմրկում մեր մատաղ սրրտեր,
Եւ ամրացրնում մեր միաքն ու հոգին,
Ուժ էին տալիս մեր Թուլցած բաղկին...

Ի՜նչ եղան դրանք... Զրքացա՞ն, կորա՞ն,
Քեզ համար այժմ չը կայ սուրբ սեղան,
Ուր որ վառվում էր սրրբազան կրրակ,
Ուր մենք ուխտեցինք, դրինք նրպատակ՝
Ծառայել ազգին անշահ, անխարդախ...
Զրքացան դրանք... Եւ նենգ ու անարդ
Սև՜, սև՜ միտումներ նրստեցին նախկին
Քո մատաղ սրրտում... «Դաւաճան» կրկին
Հրնչում է մի ձայն իմ սրրտի խորքում,
Ու խաղաղ սիրտս ցաւով մորմոքում...

1899 թ. 21 սեպտ.
Բաղու։

5-5 (9) + 10 xxx + c
19

ՁՈՐ ԾԱՂԻԿ

Սիրարս լիփ-լիք արուն լցված
Ղարի՜բ, անտէ՜ր, էս երկրում,
Մաշւում էի մենակ, կորած,
Սև տանջանքի խոր-գրկում,
Հայրենիքի սէրը սիրարս
Խորովել ու թողել էր,
Պապակ, ծարաւ, կարօտ սիրարս
Գընա՛լ, տեսնե՛լ կրստիպէր...

Նամակ եկաւ Հայրենիքէս,
Մէջը չորցած ծաղիկ կար,
Անուշ հոտէն խելառի պէս
Տեղն ու տեղը դարձայ քար...
Եւ ինչ քաղցր բոյր սրփռեցաւ,
Հայրենիքիս հոտն առայ,
Օ՜, մի բոպէ ինձ թրւեցաւ
Թէ Հայրենիք ներս մրտայ...

Մոռացայ ցաւ, մոռացայ վիշտ,
Թրռայ հեռուն դէպի տուն,
Մրտայ անտառն բատուերախիտ —
Ո՞րքան ուրախ բընութիւն...
Քրրանաթափաթախ տուն վազեցի
Մօրս գրրկի մէջ ընկայ,

«Ջան» ասացի, կուշտ պաչեցի,
Վառ կարօտս ես առայ...

Այս ու այն կողմ վազվզելով
Ծաղկէ փընջեր կազմեցի,
Սառն աղբիւրի անուշ ջրից
Ադահ կերպով խմեցի...
Ու ինձ ու ինձ մրտածեցի
Արտասուքը աչքերիս...
«Եթէ մէկ էլ սև բաղդս ինձի
«Օտար երկիր արտաքսէ,
«Եթէ հեռո՛ւ, չոր անապատ
«Ամայի տեղ ինձ բրշէ,
«Ձեզ կը տանեմ, ծաղկէ փընջեր,
«Որ իմ սիրտս սփոփէք,
«Մատաղ կեանքիս դառն հոգսեր
«Դուք տանջելու չը թողնէք...»

Անցաւ բոպէն... ցնորք, երա՜զ...
Որքան յուզիչ էր այն, ա՜խ...
Ձոր ծաղիկն էր, որից ադահ
Քաշում էի հոտ, աւա՜ղ...

Բալախանի։

Ո՞Հ, ԻԶՈՒՐ ՄԻ...

Ո՞հ, լղուր մի սիրաբս խառնի՛ր,
Սիրաբս խուփ է քեզ համար,
Այնտեղ ուրիշ դարդ է փակուած,
Դու չես անի դեղ ու ճար...

Ո՛չ, քեզ համար դուռը փակ է
Իմ մենաւոր սև սրտի,
Նրրան արդէն գրրաւել է,
Աղգրս թրշուառ ու նոթի...

Օ՜, դու երբէք մի սպասիր,
Քեզ նուիրած երդ չունիմ,
Դեռ ժամը չէ... Ցաւ կայ սիրաբս,
Թող ցաւովրս տապակուիմ...

Երբ գայ գարուն ու վարդն հոտոտ
Անոյշ բոյրով կը ծաղկի,
Երբ բըլբուլը վարդենու մօտ
Վարդի սէրը կը երգի,

Մեր աշխարհը վարուած-ցանուած
Երբ հունձ կը տայ լի առատ,

Ու գիւղացին խեղճ ու տանջուած
Նոր ուժ կառնէ, նոր եռանդ,

Ուրախ գրուարթ հանդը կերթայ
Ամեն հոգսից նա ազատ,
Իւր պապերի դաշտ ու ծորին
Տէր կը լինի հարազատ,

Օ՜, այն ժամին քեզ կը յիշեմ
Իմ մանկութեան ընկերիս,
Առուի ափին մենք կը նըստենք,
Ես կը երգեմ, սիրուհի՜ս...

1899 թ.

ԴԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Տըխո՞ւր, սրբտո՞ւմ թաւալւում ես
Սիրուն առու, քո դաշտում,
Զը լինի՞ թէ դու էլ ինձ պէս
Սև վիշտ ունիս քո սրբտում...
Դու երգում ես... սիրտըդ կիշնի,
Օ՜, ինչ քաղցր մեղեդի,
Բայց իմ սիրտը... նա երգ չունի՝,
Նա լուռ այր է ամայի...
Ես էլ կուզեմ վիշտս երգել,
Վիշտս դառն ու աղի,
Բայց իմ երգից վախենում եմ
Ծառ ու ծաղիկ թառամի...
Օ՜, դարիբի սիրտը խոց է,
Երգը վըշտի մըրմունջներ,
Նըրա դարդը այրող բոց է,
Երգը մահուան հառաչներ...

1899 թ. 5 Յուլիսի.
Բալահանի։

Օ՜, Ծ Ո՛Վ...

Օ՜, ծով մայր իմ, խոցոտ սրտիս
Վառ երգերն եմ քեզ բերում,
Առաւօտեան մըշուշի մէջ
Ճերմակ կուրծքդդ համբուրում...

Ո՛ղջ գիշերը ես էլ քեզ պէս
Անքո՞ւն, անտո՞ւն եմ մընում,
Ծով-սրբտիս մէջ ալիք, յորձանք,
Փոթորիկ է միշտ եռում...

Երգչի սիրան էլ յուզւել գիտէ...
Մրրրկայոյզ ժամերին
Երգ է ծնում խոր վէրք տալու
Մարդկանց անգութ սրբտերին...

1901 թ. 14 Մայիսի.
Զաղալու գիւղ։

ՀԱՑ ԳՈՐԾԻՉԻՆ

Եթէ ուզում ես թրշուառին օգնել,
Որբի աչքիցն էլ արցունքը սրբել,
Եթէ ուզում ես դերասան դառնալ,
Վսեմ դաղափար բեմիցը դաս տալ,
Կամ թէ խրմբագիր և կամ վիպասան
Ցանկանաս լինել դաղափարական,
Հաւատա՛, հոգիս, որ քո խեղճ կեանքում
Միայն մեռնելիս կայ շրքեղ թաղում...

1901 թ.
Նոր-Բայազետ

ԵՍ ԵՐԳԵՑԻ...

Ես երգեցի... երգս էր տխուր,
Որպէս ոդու հեծեծանք,
Որպէս քամին աւերակում
Հանում է սուր հառաչանք...

Ես երգեցի... իմ երգերում
Դուք մի փընտրէք խի՞նդ, ծիծաղ.
Ես զաւակ չեմ այն ազգերի,
Որ ապրում են միշտ ուրախ...

Մի ազգ ունիմ խեղճ ու անճար,
Սիրտը խոցոտ, արնաքամ,
Վաթան ունիմ աւե՞ր, թրշուառ,
Հեծկլտանքի օրորան...

1901 թ. 10 Յուլիսի.
Նոր-Բայազետ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դու երգեցիր... քընքուշ երգը քո սիրուն
Թըշուառ ազգիդ հառաչանքն էր ոլորուն.
Յաւի՜, արեւո՜ն տառապալից ժամերին
Ողի տըւիր քո վըշտալի քընարին..
Թէ քո հայը վըշտոտ երգըդ մոռանայ,
Աշխարհ-աշխարհ նրան նզովք թող կարդայ...

Մըտրակեցիր քո երգերով հարըստին,
Ամուր ապտակ դու հասցըրիր երեսին,
Դու ցոյց տըւիր նրան դորժի ճանապարհ.
—Ազգի օգտին փողդ ժախսիր անհամար—
Թէ քո «Թուքը» հայ հարուստը ուրանայ,
Թող իւր երկու աչքերովը կուրանայ...

Էդ քու դարդը մեր սև ցաւն էր հո՜ւր վառման,
Քո կըսկիծը խեղճի վիշտն էր վառ-եամանն...
Դու աշխարհին մեր տանջանքը պատմեցիր,
Եւրոպային սուր նախատինք կարդացիր.
Թէ հայ ազգը քո բարիքը չիմանայ,
Աշխարհի մէջ տեղ ու դադար չունենայ...

Դու լոյս տըւիր մեր մռութ, խաւար աչքերին,
Դու յոյզ ու բոց տըւիր թըմրած մեր մրտքին
Եւ վըշտածայն քո երգերով դեղդեղուն
Սիրտ վառեցիր, արցունք հոսեց հեղհեղուն.
Թէ հայ մարդը քո գործերը ուրանայ,
Երկրագընդում օր ու արև չունենայ...

1901 թ. 18 Նոյեմբ.
Նոր-Բայազետ։

4-4-3 (6) 24 C.

Վ Ր Է Ժ

Էլ ոչ ոք դընամ ես, ոչ սարից ընկնեմ,
Որ Քեաֆուր-մարդու ձեռքից ազատուեմ,
Սըրտիս մէջ՝ կըրակ, ալէկոծ վիշտ կայ,
Վրէժն է եռուն, խարոյկը՝ հրսկայ...

Քար-սիրտ Դուշմանըս մըրկեց, խորովեց,
Ազիզ Վաթանից ինձ դուրս վըռընդեց,
Սիրուն Եարիս էլ տիրեց ու առաւ,
Տունըս ու տեղըս աւերակ արաւ...

Էլ ճամբայ չը կայ, ես էլ ճար չունեմ,
Գընամ Դուշմանիս յետևից հասնեմ,
Ճակատ-ճակատի կրռուեմ ու ջարդեմ,
Ու արնոտ ձեռքէն Եարըս ազատեմ...

1901 թ.
Նոր-Բայազէտ

5-5 (4) 12 с.

ԷՆ ԿԱԹԻԼԸ...

Երազիս մէջ մօրըս տեսայ՝
Լաց էր լինում հառաչում,
Ինձ սեղմել էր քընքուշ կըրծքին
Ու լուռ ու մունջ արտասուում...

Յակինթի պէս գեղեցիկ էր
Էն կաթիլը արցունքի,
Օ՜, նըրա մէջ նըկատուում էր
Վիշտն ու թախիծն աշխարհի...

Էն արցունքը սիրտս կաթեց,
Սիրտս ցաւով բըռնըւեց,
Էն արցունքը գըլխիս կաթեց,
Գըլխիս մաղը սիպտակեց...

1902 թ. 14 փետր.
Ղազար

4-4/4-3 (4) 12 տող

Էս լսէլի մի տարբերակ կայ

ԾԱՆՐ, ՍԵՐ ԴԱՐԴԵՐ...

I.

Ծանր, սե՞ զարդեր իմ վրշտոտ կրծքին,
Հիւանդ եմ պառկած լուռ ու մունջ մահճում,
Աշխարհի ցաւն է կրծում իմ հոգին
Եւ մի ահարկու ձայն է ինձ հասնում.
«Ժամդդ է հասել... քո տանջուած կեանքին
«Ահա տալու եմ ես հանդիստութիւն...»
Օ՜, մի՞թէ... չո՞ւտ է, վաղ է դեռ մեռնել.
Զէ՞ որ ես ոչինչ դեռ չեմ կատարել...
Ո՞հ, ի՜նչպէս կրծու բազկիս ծիծաղեց,
Արդեօք ո՞վ խեղճիս այսպէս անիծեց:
Ո՞ւր էր եթէ զէթ կեանքիս երկարէր,
Մի քանի տարի նորից ուժ առնէր.—
Գուցէ այն պահուն կարողանայի
Հոգուս մէջ դիզուած, սրբտիս մէջ կիտուած
Վառ փափագներս ես իրագործել,
Գուցէ այն պահուն կարողանայի
Մի օգտակար գործ բարիքներով լի
Կարօտ ու պապակ ազգիս կրտակել...
Իսկ հիմա... այժմ ոչինչ չեմ արել...
Մեռնել անհնարն, մեռնել անօգուտ,
Իղձերս մաքուր, յոյսերիս կրակ,

Գորգելու ծարաւ սիրտս այսքան շուտ
Ծաժկել ու թաղել սառը հողի տակ...
Ո՞հ, այդ չեմ կարող,
Ես տարստփուում եմ.—
Ծանր է ինձ համար,
Ես կարկամում եմ...

II.

Դադաղում պառկած լրսել ամենքից
Արդար կրշտամբանք, կուտակուած զայրոյթ
Լսել քեզ մօտիկ մարդկանց բերանից՝
—«Նա ոչինչ չարեց, մեռաւ անօգուտ...»
...Բայց թէ գիտենամ որ մեռնելուց յետ
Ես չեմ կորչելու անդարձ ու անհետ,
Անբմբրռնելի եթերի կեանքում
Դարձեալ կարող եմ հասնել իղձերիս,
Կարող եմ ապրել աստղերի ցանցում
Ու միշտ կարեկցել խղճալի ազգիս,
Այնտեղից գործե՞լ, մեղմիկ պրսպրալ,
Որբին յոյս շընչել, խեղճի ցաւն հոգալ,
Արցունքոտ աչքից կաթիլը սրբել,
Անճար թշուառին օգնութեան հասնել,
Կամ կայծակ դարձած անհուն ոլորտից
Սրլանալ դեռին, շանթել երկնքից
Բարբարոս դահճին, եղեռնագործին,

Լիրբ վաշխառուին, կեղծ բարեգործին,
Եւ մարդկութեան մէջ սի՞ն, աննպատակ
Բուն դրրած մօլի վարքն ու բարքն ուղղել,
Եղբայրսիրութեան սուրբ դրրօշակը
Երկնակամարից մեղմիկ փողփողել,
Օ՞, այն ժամանակ հանդիստ կը մեռնեմ,
Այստեղից ուրախ երկինք կը թռնեմ...
Եւ դարեր կանցնի, մարդիկ կտեսնեն,
Որ ես շողում եմ աստղերի միջին,
Որ ես ապրում եմ, թէ ես կայծակեմ,
Մրթին ոլորտում դեռ ես շրջում եմ,
Գալարւում, կրծկրւում, դեռ ևս գործում
Անհուն եթերի միդասատ ծոցում...
Միայն այդ ժամին
Հանդիստ կը մեռնեմ,
Եթէ՝ այդ լինէր,
Ա՜խ, իղձե՞ր, իղձե՞ր...

1902 թ. 10 Մարտի.
Ղզլար։

ՇՈՒՇԻ՛Կ, ԱՂՋԻ՛Կ...

Շուշի՛կ, աղջի՛կ,
Քեզի ասի.
«Սիրտս նուէր եմ տալիս,
«Սէրս, ե՛րդս,
«Տրխո՞ւր, մրռմո՞ւր,
«Գանձս քեզ եմ ես տալիս...»

Նուշ
Ծոցդ բաց,
Մուշ
Ծոցդ բաց,
Եա՛ր ջան, ինձ ներս ընդունի՛ր,
Սև
Աչքս լաց,
Սև
Սիրտս բաց,
Եա՛ր ջան, ինձ ներս ընդունի՛ր.

Սևուկ,
Մևուկ,
Անծայր,
Խաւար,
Աչերդ ինձի վառեցին,
Քրնքուշ,
Անուշ,

Մատաղ,
Խաղաղ
Կեանքըս սևով պատեցին...

Օ՜,
Անգութ եա՛ր,
Օ՜,
Անսիրտ եա՛ր,
Ղարի՜բ, օտար մաշուեցի,
Էդ
Աչերիդ,
Նուշ
Պաչերիդ,
Ծարա՜ւ, պապակ, հալուեցի...

Եար
Սիրեցի,
Կեանք
Ասացի,
Եարըս երես դարձրեց,
Աչքը
Սև էր,
Սիրտը
Մութն էր,
Հարուստ տղին սէր տրուեց...

Էն
Օրուանից,
Սև
Օրուանից
Ղարիբ ընկած քուն չունիմ,
Ոչ
Մի սրրտում,
Ոչ
մի գրրկում
Սիրող ժոցում բուն չունիմ...

Օտար
Հողում,
Ղարիբ
Տեղում
Եօթը տարի ալ հաղնեմ,
Սիրտս
Սև է,
Վրշտի
Ծով է,
Թէկուզ վարդի մէջ ապրեմ...

1902 թ. 20 Մարտի.
Ղզար.

ՆՐԱ. ԱԼԲՈՄՈՒՄ

Օ՜, դիտեմ, հոգիս, քանի մանուկ ես,
Իմ վրշտոտ երգը քեզ չի գրաւի,
Քանի անհոգ ես թիթեռնիկի պէս,
Երգիս քեզ դատարկ հընչիւն կը թուի...

Քանի քո սիրտը դեռ չէ ճաշակել
Աշխարհի ցաւը, կամ մութ գիշերին
Քանի դեռ աղի արցունք չես թափել,
Դու չես հասկանալ իմ սև երգերին...

Քանի դեռ դէմքդդ փայլում է մեղմիկ,
Որպէս արշալոյս պայծառ գոյներով,
Երբ չես ըղձացել սիրոյ փոթորիկ,
Չես էլ ըղձացուի իմ սև երգերով...

Բայց ժամանակը սահում է թրռչում,
Կանցնեն և քո այդ օրերը պայծառ,
Դու էլ կը սիրես, սիրոյ փոթորկում
Նաւդդ կը ջարդուի՜, կընկնես վրշտահար...

Եւ լուռ սենեակում, այդ տխուր ժամին,
Դու կը հասկանաս իմ երգի ձայնին,
Կը յիշես, որ կայ մի սիրտ աշխարհում,
Ուր դու ապրում ես, որ քեզ է սիրում...

1902 թ. 19 Մարտ.
Ղզլար

5-5 (4) 20 ալաբ (c. 6 կող

ԻՄ ԱՍՏՂԸ

Էն աստղը ինչքան մութն ու խաւար էր,
Որի տակ մայրիս ինձ աշխարհ բերեց,
Էն աստղը ինչքան սև ու մրոտյլ էր,
Որի տակ մայրիս ինձ կեանք պարգևեց...
Անէծք էն աստղին, անէծք էն օրին,
Երնէկ էն ժամին արգանդը չորնար,
Երնէկ կուլ գնար հրսկայ ցաւերին
Ու ինձ սև բաղդով չը բերէր աշխարհ...

1902 թ. 22 Մայիս.
Ղզլար

5-5, 8 ալաբ

Ե Ր Է Կ...

Երէկ սիրտս արուն կուլար,
Ների՛ր, անուշ մայրիկ ջա՛ն,
Աչքէս աղի արցունք կուգար—
Սև էր օրս, մայրիկ ջա՛ն...
Օ՜, թող լեզուս համբ դառնար,
Սիրտս մեռնէր սև դարդից,
Միայն նզովք քեզ չը կարդար.
Ախ, անուշ ջա՛ն, ներիր ինձ...

1902 թ. 23 Մայիսի.
Ղզլար։

ՕՐ. Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ

Օ՜, մաքուր տիպար սուրբ գեղեցկութեան,
Նայում եմ ես քեզ, նայում եմ երկար,
Դու աւետում ես շողեր խրնդութեան
Ցաւով տառապող թշուառի համար...

Քո սրտից բըղխած անկեղծ խրնամքով
Դու եղի՛ր պատրաստ խեղճերին օգնել,
Ու նոցա համար աղի արցունքով
Ե՛ւ լալ, և՛ մաշող վրշտին կարեկցել...

Ծաղկի՛ր, դու չըքնաղ եդեմի սրբերանք,
Որպէս արշալոյս ծիծաղկոտ գարնան,
Թող այդ անուշիկ սէրն ու մեղմ գրգռանք
Քեզ առաջնորդեն մինչև դերեզման...

1902 թ. 21 Յունիսի.
Ղզլար։

ՍՈԽԱԿՆ ՈՒ ԵՍ

I.

Գարնան անուշ լուռ գիշերին
Խեղճ սոխակը զիլ երգեց,
Սրբոի սէրը սիրած եարին
Վրշտոտ երգով նա պատմեց...
Բայց ալ-վարդը չը հասկացաւ
Նրբա տրխուր երգերին,
Անդորը, խաղաղ, լուռ քընեցաւ,
Արհամարեց սոխակին...
Զոր փրշերը խեղճ բրլբուլի
Ոտն ու թևը ծակեցին,
Սուր փրշերը քընքուշ սիրտը
Քրքրքրեցին, մաշեցին...

II.

Ես էլ գարուն հասակիս մէջ
Երգ երգեցի քեզ համար,
Եւ ասացի.—«Սէր տուր անշէջ
«Սիրող եարիդ վրշտահար...»
Դու իմ երգը չը հասկացար,
Սառը վրրաս նայեցիր,

Օ՜, անտարբեր դու հեռացար,
Եւ ինձ մենակ թողեցիր...
Էն ժամուանից սև մրշուշը
Պատեց սրբոիս ու աչքիս,
Էն օրուանից սիրոյ փուշը
Ծակեց կուրծքիս ու հոգիս...

1902 թ. 30 Յունիսի.
Ղզար։

ԵՐԿՈՒՍԻՑ ՄԷԿԸ...

Երբ ես տրխուր եմ աշխարհի ցաւով,
Երբ տանջող վիշտը կրծում է հոգիս,
Կուրծքիս մաշւում է հազար մի վէրքով,
Մրռայլ թախիծը պատում է սրտիս,

I.

Ուզում եմ՝ որ այդ դառը վայրկեանին
Մայր բընութիւնը սև սուգի փոխւի,
Անտառը ողբայ՝ շընչէ ցաւագին,
Մաքուր դետակը կատաղի, յուզւի...

Լուսինը հանգչի, աստղերը մարին,
Խաւարը պատէ մրռայլի քողով,
Ամպերը յուժկու իրար զարնւին,
Անձրևը տեղայ յորդ կաթիլներով...

II.

Կամ թէ՝ սիրուհիս յուշիկ քայլերով
Բաց անէ դուռը մութ օթևանիս,
Եւ մազերն արծակ, անմեղ ժրպիտով,
Մանկական սիրով փաթաթւէ վզիս,

Եւ կրծքիս հենուած փափլիկ ու քընքուշ,
Նազուկ մատներով վէրքս շոշափէ,
Մեղրոտ շրթունքով այրող ու անուշ,
Տաքուկ համբոյրներ այտերիս թափէ...

Մէկում կը դրտնեմ մի լացող ընկեր,
Որի հետ արցունք կը թափեմ անվերջ,
Միւսի ժրպտից կը հալւեն վշտեր,
Հոգիս կը քընի երազների մէջ...

1902 թ. 12 Յուլիսի.
Ղզլար։

5-5 (4) 24 տող

Մ Ի՞Թ Է...

Մի՞թէ հանդաւ քեզ համար
Լոյսը պայծառ արևի,
Մի՞թէ թոշնաւ քեզ համար
Ծաղիկն անուշ եղեմի...

Մի՞թէ յոյսրդ մարեցաւ,
Սիրտրդ մեռա՞ւ յաւիտեան,
Չէ՞ բացւելու էլ բընաւ
Քեզ արշալոյս վաղորդեան...

Օ՜, ասա՛ ինձ, սարսեցա՞ր
Բոսորագոյն արիւնից,
Թէ՞ գողացի՞ր, վախեցա՞ր
Ճենճերահոտ բոցերից...

Թող որոտա՛յ քո գըլխին
Սև երկինքը գոռ, յուժկու,
Թող վերերէն ճարճատին
Շանթ ու կայծակն ահարկու։

Մի սարսափիր, իմ խեղճ ա՛ղջ,
Մի տառապիր դու անյոյս,
Կանցնեն և՛ վիշտ և՛ տանջանք,
Քեզ կը ծագի արշալոյս...

1902 Թ. 18 Յուլիսի.
Ղզլար։

ՈՐՔԱՆ ՍԻՐՈ՞ՒՆ ԵՍ...

Օր. Մ.-ին.

Որքան սիրո՞ւն ես, երբ տխուր դէմքով
Նըստած ես լինում ծեր դրրան առաջ,
Եւ քո փափկասուն կուրծքը այրելով,
Երբ դուրս է թրռչում կուսական հառաչ...

Որքան սիրո՞ւն ես, երբ քո աչերից
Մարգարտի նըման արցունք է թափւում,
Երբ կաթիլները իրար յետևից
Գողտրիկ հոսանքով ցած են գլորւում...

Երբ մազերդ արձակ թափուած են լինում
Նուրբ ալիքներով քո նազուկ մէջքին,
Հաւատա՛, հոգիս, այդ ըստվերին
Դու նըմանում ես հէգ Նիոբէին...

Ղզլար։

ՀՍԿԱՑ ՑԱՒԵՐՈՎ...

Հրսկայ ցաւերով շրջում եմ լռիկ,
Ցաւեր՝ որ դեղի, սրրտի են կարօտ—
Եւ երկնից դալուկ լուսինը զողտրիկ
Լուսաւորում է կուրծքիս արիւնոտ...

Շրջում է և նա, հաստաձ, պրճնուած,
Խօսում, ժիժաղում դերող ժրպիտով,
Ուրախ պատանիք նրան շուրջ արած,
Հրճւում են նրա կաշկանդող ժրպտով...

Իսկ ես մենակ եմ... վիշտն ընկեր չունի,
Բոլորի վրշտից հեռու են փախչում,
Օ՜, իմ սև դարդը սիրող սիրտ չունի,
Բոլորը ինձնից հեռու են փախչում...

Ցուժկու ցաւերով շրջում եմ մենակ
Սիրոյս աւերակ, քանդուած տաճարում,
Ուր ես Թաղեցի իղձերս անյատակ,
Անարկու վրշտի փրլատակներում...

1902 Թ. 29 Յուլիսի.
Ղզլար.

5-5 (4) 16, abab

ԸՆԿԵՐԻՍ...

Խ. Մ.-ին.

Գնա՛, ախպէր, ճամբիդ զուրբան,
Նրպատակիդ ծառայի՛ր,
Դու կեանք մրտիր, փրշոտ ճամբան
Անվախ, ուրախ պատառի՛ր...

Ո՞ւր էլ գրնաս, ո՞ւր էլ մրտնես,
Թէ գիւղ, քաղաք, Թէ աւան,
Կարօտ մարդիկ շատ կը գրանես,
Կարօտ եղբօր օգնուԹեան...

Գրնա՛, ախպէր, չը սարսափե՛ս,
Զը վախենաս դու կեանքից,
Լաց, հառաչանք շատ կը լրսես,
Եղի՛ր նրրանց կարեկից...

Գրնա՛, ախպէր, սէրրս քեզ յոյս,
Ուրախ ժրպիտ երեսիդ,
Մրտի՛ր գործի լայն ասպարէզ,
Բայց չը մոռնաս ընկերիդ...

1902 Թ. 28 Օգոստոսի.
Ղզլար.

8/7 (4) 16 abab

ԳՐԶԻ ԶԻՆԻՈՐԸ

Գ. Արծրունու յիշատակին.

Թաւ ծառերի տակ, խոտերի գրրկում
Մի գերեզման է ահարկու շրնչում,
Աշխարհից հեռու, բրնութեան ծոցում
Գրրչի զինուոր է յաւիտեան հանգչում...

Նա իւր սուր-գրրչով պատերազմ իջաւ,
Մրթին խաւարի որդիների դէմ.
Զարկեց ու զարկուեց, յաղթանակ տարաւ,
Սուրբ պատերազմում ընկաւ խրնդագէմ...

Ե՛կ, մենք ուխտ գրնանք սուրբ գերեզմանին,
Զոգե՞նք, համբուրե՞նք, ոխ քէն դէն ձրգենք,
Թող մեր սրրտերը նոր ուժով լրցուին,
Ե՛կ, նրրա շաւղով անսխալ գործենք...

1902 թ. 22 Օգոստոսի.
Ղզլար։

5-5 (4) 12 abal

* * *

Ոչ ասողը գիտէ՝, ի՞նչ կայ իմ սրրտում,
Որ միշտ այրում է սև սիրտս տրրտում,
Ոչ էլ ալ-վարդը կարող է ըզգալ
Սիրոյ վառ ցաւը ու ինձ հետ սրգալ...

Սիրտս քարայր է խորհունկ, անյատակ,
Վրշտերրս անհուն ու անշէջ կրրակ,
Ոչ վարդի բոյրը կարող է հասնել,
Ոչ ասողի ցոլքը խորը թափանցել...

Օ՜, անգութ աղջիկ, ո՞ւր ես, յայտնրւի՛ր,
Այդ անհուն վիշտը դո՛ւ այնտեղ դրրիր,
Ինչպէս որ սիրտս արիր գերեզման,
Այնպէս մօտեցիր, կեանք տուր դու նրրան...

Օ՜, շուտ յոյզ տուր ինձ, բոց՝ հանգչող սրրտիս,
Թևեր մրաքերիս, կրրակ՝ քրնարիս.
Շուտ արի՛, անգութ, երգէ՛ ականջիս,
Թող քրնքուշ երգրդ ամոքէ հոգիս...

1902 թ. 7 Սեպտ.
Ղզլար։

5-5 (4) 16 c. (u.) - 1 գր.

ՓՇՐԱՆՔՆԵՐ

I.

Լաւ կինն է դանծ, ակ, մարգարիտ,
Ուրախութիւն ու խընդում,
Կեանքդ զոհի՛ր սիրած եարիդ—
Ահա՛ սուրբ կեանք աշխարհում...

22 Յունիսի.

II.

Դու ծաղկում ես ու փրթթում,
Ես դալկանո՞ւմ, թառամո՞ւմ,
Դու կեանք կուզես յաւիտեա՞ն,
Իսկ ես՝ խոնաւ դերեզման։

23 Յունիսի.

III.

ԷԼ ՀԵՐԻ՛Ք...

Էլ հերի՛ք, սէր իմ, անկիւն աղերսես
Պրճնազարդ կանանց անդութ սրբաերում,
Բաղդաւոր, սուրբ կեանք հերիք երազես. —
Վարդ աղջիկները ոսկի են սիրում...

Օ՜խ, թափառական, անվերջ յոյսերով
Դեռ դու ծեծո՞ւմ ես իղուր, անդադրում,
Նոքա չե՛ն խրդճայ քո աղերսներով.—
Խոցող քրքիջով տես քեզ են ծաղրում...

21 Յուլիսի.
Ղզլար։

IV.

Դու միշտ ինձ յիշի՛ր
Գարունը դալիս,
Եւ լուռ արտասուիր
Անունըս տալիս...

Գարուն էր, երբ քեզ
Ծաղուկ սիրեցի՞,
Գարուն էր, երբ ես
Մահրս ըզգացի...

17 Օգոստ.
Ղզլար։

V.

Վարդ սիրեցի — փուշը ծակեց,
Վարդն անսէր էր — չորացաւ.
Եար սիրեցի — եարըս խաբեց,
Կեանքրս մրթնե՞ց, սեւացաւ...

9 Սեպտ.
Ղզլար։

VI.

Ա՞խ, երնէկ ձեզի,
Որ սէր էք քաշում,
Եւ սիրող սրտում
Տեղ էլ էք գտնում.—
Մենակ ես եմ, որ
Կեանքիս եմ մաշում,
Բայց եարիս սրտում
Հէչ տեղ չեմ գտնում...

1902 թ. 15 Սեպտ.
Ղզլար։

5, 8, хааа нли ~ хаха

VII.

Բաղդն ինձ հալածեց, աշխարհն էլ ատեց,
Երկինքն ինձ նայեց ու շանթեր թափեց,
Ծաղիկ քաղեցի՝ նա էլ չոքացաւ,
Կոյսին սէր տուի՝ նա էլ ուրացաւ...

Միայն մէկ խորշ կայ, որ ինձ չէ ատում,
Որ թեւատարած իւր գիրկն է կանչում.—
Ասա՛ ինձ, արդեօք, ո՞, խաղաղ շիրիմ,
Քո խոնաւ ծոցում պիտի դադարիմ...

1902 թ. 27 Սեպտ.
Ղզլար։

5-5 (4) 8 с.

VIII.

Դու միշտ սիրէ ու վրստահիր այն մարդին,
Որ յանցանքդդ երեսիդ է միշտ խրփում,
Ուրիշի մօտ, օտարների առաջին,
Վարք ու բարքդ, համեստութիւնդ է գովում...

1902 թ. 28 Սեպտ.
Ղզլար։

4-4-3, 4, abab

IX.

Ցոյսն առանցքն է այս կեանքի
Եւ փարոսը նաւորդի.
Ապրել անհայ կարող էք,
Առանց յոյսի՝ ո՛չ երբէք...

Ղզլար։

4-3, 4, с,

X.

Լաւ է լինիս դու գիտուն,
Քան թէ հարուստ մեծատուն.
Առողջ կեանքին չէն հասնի
Գանձ, գիտութիւն աշխարհի...

Ղզլար։

4-3, 4, с.

XI.

Ընկեր, ահա ծովն, տես ինչ շառաչում,
Ինչպէս ալիքները իրար է խրփում,
Տես, ինչ ահարկու ցաւով հառաչում
Եւ ափի վրայ փրփուր է թրքում...

Այդպէս և սիրտս վշտի խոցերով
Կոշտ կրծքիս տակին հեծում է, տանջւում,
Օ՜, ընկեր, արի՛, յոյսի բոցերով
Բրժշկի՛ր նրան... նա քեզ է կանչում...

1902 թ. 29 Սեպտ.
Ղզլար։

5-5, 4 b, abab

XII.

Ընկե՛ր, ես կեանք եմ իջնում կրծքաբաց,
Օրհնի՛ր իմ գործը, օրհնի՛ր իմ ճամբան,
Թող քո աղօթքը սրբութիւդ բրղխած,
Ղարիբ ճամբորդիս լինի պահապան...

Ղզլար։

5-5, 4, abab

XIII.

Ընկե՛ր, ահա՛ լոյս, ահա՛ առաւօտ,
Տե՛ս, շառագունեց կամարն երկնքի,
Արտուտն էլ թրռաւ գաշտեր ու արօտ.
Ե՛լ, լոյսը բացւեց, ե՛լ, երթանք գործի...

1902 թ. 30 Սեպտ.
Ղզլար։

5-5, 4 abab

XIV.

Էլի՜ կեանք...

Զաղ--պաղ քամին փրչեց վերից,
Տերևները թափւեցին,
Բոյս ու ծաղիկ թոշնաւ նորից,
Ժրպի՜տ, ժիժաղ, մարեցին...

Մի հատ ծաղիկ ուշ մընացած
Սարի խորունկ ճեղքերում,
Դեռ կեանք կուզէր չը կրշտացած
Մահուան ամուր ճանկերում...

Կատղած շընչով աշնան քամին
Փրչեց յուժկու սուլելով,
Ծաղիկն ընկաւ, ընկաւ գետին,
Դեռ «էլի՜ կեանք»—հրժժելով...

1902 թ. 10 Հոկտ.
Ղզլար։

8/22, 4, abab

XV.

ԻՄ ԵՍ.ՐԻՆ...

Վարդ մի սիրէ —
Փուշ ունի,
Սիրտ կը պատռէ,
Փուշ ունի...
Հեզ շուշանին
Դու սիրէ,
Որ բաղդ ու փառք
Քեզ բերէ...

1902 Թ. 1 Դեկտ.
Ղզլար

4/3 ābāb

XVI.

ՍԻՐՏԴ ԵՐԿԻՆՔ...

Սիրտրդ՝ երկինք, սէրրս լուսնեակ,
Թող միշտ շողայ նա այնտեղ,
Սիրտրդ խոր-ծով, սէրս խաս-ակ,
Թող միշտ մրնայ նա այնտեղ...

Սէրրս՝ ալ-վարդ, սիրտրդ՝ ծաղկոց,
Թող նա բացուի քո ծոցում,
Սիրտրդ՝ քուրայ, սէրրս վառ-բոց,
Թող միշտ վառուի քո կրծքում...

1902 Թ. 11 Դեկտ.
Ղզլար

8/7 (4) 8 abab

ԷՆ ԳԻՇԵՐԻՆ...

Էն գիշերին, վառ գիշերին զովաշունչ,
Առուակն անուշ խոխոջելով կը հոսէր,
Եւ սոխակը ծառերի մէջ քաղցրաշունչ,
Սիրոյ անուշ դիւթիչ երգեր կը հիւսէր...

Առուի ափի ծաղիկները ժրպտային,
Սիրոյ քընքուշ քաղցրիկ տաղեր երգեցին,
Եւ նաղելի ցօղունները թեքելով,
Իրար գրկած համբոյր տուին գրգռանքով...

Երգ էր երգում և սիրուհիս ըզմայլուած,
Սէր էր տալիս, խոստանում էր միշտ սիրել,
Եւ երկինքը նրրա ձայնից կախարդուած,
Բիւր աստղերով շուշան կուրծքն էր զարդարել...

Բայց վա՜յ խեղճիս... հաւատացի էն երգին,
Քնարրս առայ, զարկի քընքուշ լարերին,
Սիրտրս բացի՜, սէրրս նրուէր անմեկին
Ընծայ տուի... ափսո՜ս անցած օրերին...

Այժմ միայն վրշտի լարն է հառաչում
Առուի ափին, ծաղկանց գրրկում գիշերով,
Քնարրս առած ես լալիս եմ ու տանջւում,
Անցած սիրոյ սև օրերը յիշելով...

1902 Թ. 27 Սեպտ.
Ղզլար

4-4-3 (4) 20 (abab), e

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒՆԵՐԻՑ

I.

Արի, հոգի՛ ջան, արի՛ մեր դուռը,
Սիրտս ընկել է սիրուդ մրռմուռը,
Երբ պիտի լինի բրռնեմ քո կուռը,
Պաչեմ քո ծոցի երկու վառ-նուռը...

Աղջիկ եմ սիրել անունը Մարան,
Ցաւերս նորից սև ու մութ դառան...
Օ՜, բաղդս սև էր ադռաւի նման,
Թրռաւ... ու ես էլ իջայ դերեզման...

1902 թ. 29 Նոյեմբ.
Ղզլար։

5-5 (4) 8 ա.

II.

Էյ, վա՛խ, աշունն եկաւ օրրս սևացաւ,
Սիրուդ եամա՛ն ցաւով սիրտս էրևեցաւ,
Արի՛, սիրուն, արի՛, արի՛, պատուական,
Էղնինք իրար մօտիկ, սրրտանց սիրական...

Սիրուդ վառման կրրակն իմ սիրտն ընկաւ,
Եթե՜մ, ջիւան ջանրս քրրքրրեց, կերաւ,
Արի՛ սիրուն, արի՛, արի՛, հոգի՛ ջան,
Էղնինք իրար մօտիկ, սրրտանց սիրական...

Անտէ՞ր, դարի՞ր, դուրբաթ կեանքրս մաշեցի,
Սիրուն աչք ու ունքիդ կարօտ մրնացի,
Արի՛ սիրուն արի՛, արի՛, անուշ ջան,
Էղնինք իրար մօտիկ սրրտով սիրական...

Էս մաշող կարօտին ես չեմ դիմանայ,
Արի՛ մօտիկ, արի սիրտս հովանայ,
Արի՛, սիրուն, արի՛, արի՛, արև ջան,
Էղնինք իրար մօտիկ սրրտով սիրական...

Թէ որ մօտիկ չը դաս, կիջնեմ դերեզման,
Դատաստանի առաջ կեղնիս պարտական,
Արի՛, անուշ, արի՛, արի՛, Մարս ջան,
Էղնինք իրար մօտիկ անկեղծ սիրական...

1902 թ. 20 Հոկտ.
Ղզլար։

4-4-3 (4) 20 aa rr

III.

ՋԱՆ ԳԻԻԼՈՒՄ

1.

Սիրել եմ, ա՜խ եմ քաշել,
Ցաւերով սիրտս մաշել,
Սև-աչերիդ սև սիրով
Էս ջիւան կեանքս մաշել...

2.

Գլուխս կախ եմ արել,
Քեզ համար լաց եմ եղել,
Մի օր քեզ չը տեսնելիս,
Սիրտս սրգւոր է դառել...

3.

Գարուն է ալ ու կանաչ,
Ես քեզ հետ տես ու ճանաչ,
Մեռնեմ դօշիդ սև խալին,
Համ վարդ է, համ էլ կանաչ...

4.

Գրնանք բաղը վարդ քաղենք,
Մօրրդ սիրաը դաղ անենք,
Ինչքան կուզի Թող խօսի,
Սիրել ենք, իրար կառնենք...

5.

Նաշխուն ալ-ծիս Թամքեցի,
Թուր ու Թրվանք կապեցի,
Մարան եարիս Թարքս առայ,
Ջուխտ երեսը պաչեցի...

6.

Կարմիր ծիս Թող է արել,
Քու մօր քար սիրտը վառել,
Մօրրդ սիրտը պատրուուի,
Եարը եարին է առել...

1902 Թ. 3 Դեկտ.
Ղզլար։

Стихотворение 1 строф
4-3 (4) 24 слога
1 ряд 3-4

***

Էն կարմիր գարնան ոսկէ արևից
Սար ու ձոր գառ-վառ նոր շորեր հագան,
Երկինքը չրքնաղ ժրպտաց վերևից,
Հաւքերը թրռան, անցան ու եկան...

Էն կանաչ գարնան անուշ օրերին
Արև աչքերից ցոլքը սիրտս ընկաւ,
Էն խաղաղ, պայծառ, լուռ գիշերներին
Հիւանդ ու յոգնած սիրտս կեանք առաւ...

Եւ վաղուց մարած իմ մատաղ սրտում,
Նորից սուրբ սիրոյ հրդէհ բռնկուեց,
Նորից քաղցրացաւ ինձ կեանք աշխարհում,
Եւ սիրտս նորից յոյսերով լցուեց...

Նորից գերեցին ինձ վիշտ ու ծիծաղ,
Ծաղիկ ու աղջիկ, կռիւ ու տանջանք,
Օ՜, ես նոր ուժով, նոր ուժով անվախ,
Սիրեցի կեանքը, իմ մաքուր տենչանք...

1902 թ. 22 հոկտ.
Ղզլար։

5-5 (4) 16 abab

ՍԵՒ ԱԳՌԱՒԻԼ

Զիւն է գալիս, ծածկում գետին,
Դուրսը ցուրտ է ու բորան,
Հառաչում է կատաղած քամին,
Սար ու դաշտեր կը դողան...

Սև ագռաւն է ծառին թառած
Զարագուշակ կռկռում,
Լուսամուտիս առաջ նըստած
Ես նայում եմ, մրտածում.

«Ո՞ւրքան սրրտեր վառ յոյսերով
«Ծրոփում են ու ապրում,
«Ալ-տենչերով, վառ յոյզերով
«Կանաչ գարնան ըսպասում...

«Կանցնի ձրմեռ, գարուն կը գայ,
«Բաղդ կը բերէ բոլորին,
«Նոր կեանք, նոր սէր, նոր խի՜նդ կը տայ
«Նրրանց այրող սրրտերին...

«Օ՜, մենակ ինձ գարուն չի՛ գայ,
«Էլ չի ծաղկի մանուշակ,
«Ղարիբ մարդուն գարուն չը կայ,
«Ոչ կոյսի սէրն անուշակ...

«Կեանքս է քամի, սիրտս՝ ծրմեռ,
«Հոգուս մրրրիկ է տիրում,
«Բաղդս սև՜ է ագռաւի պէս,
«Սև օրեր է ինձ բերում...

Դուրսը ցուրտ է, ձիւն է գալիս,
Ես դողում եմ, սրռսրռում,
Մահս է մօտիկ... ո՜, չոր գլխիս
Սև ագռաւն է կռկռում...

10 Դեկտ.
Ղզար։

1902 թ.

13 Նոյեմբերի.

Դեռ գրնում ենք մենք, միասին ճանապարհ,
Հրսկա՜յ, հրպա՜ռտ, լերկ ժայռերը ճեղքելով,
Ե՛ւ վա՜ռ հաւատ, և՛ սուրբ աղնիւ գաղափար,
Անծնագոհ սէր ոգևորուած երգելով...

Դեռ եռում է բոց յոյզերից կրրակուած
Մեր վե՜հ, մատաղ, անշահասէր սուրբ հոգին—
Ծիծա՜ղ, քրրքի՜ջ... Մեզ սուլում են կատաղած,
Մենք չենք լրսում, մենք գրնում ենք մեր ուղին...

Ճամբի կէսին գուցէ ճայթի վատ մարդկանց
Ստոր գործը, ստոր արարքն ահռելի,
Կրարեն ուղին, անդունդ բանան մեր դիմաց,
Չը սարսափենք, անվախ կրռուենք սրրտալի...

Եւ սուրբ կրռուում մեր շարքերը սեղմելով,
Շարժուենք առաջ, դարձեալ փրշեր ճեղքելով,
Մինչ վերջին շունչ, վերջին կաթիլն արիւնի,
«Կեցցէ՜ սուրբ գործ» ոգևորուած երգելով...

Ղզար։

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

Մութ մրռայլով ես զբնում եմ ճանապարհ—
Երկար է իմ կեանքի ճամբան, իմ ուղին...
Ձիւն է նրստած, խաւար պատած, խոլ-խաւար,
Բուք ու բորան կուչ են ածել մայր-հողին...

Արդարութեան բեռը շալկած դարեւոր,
Ես տընքում եմ թշուառ մարդկանց ցաւերով.
Խե՜ղճ, անարգւած ես ճամբորդ եմ մենաւոր,
Սիրտս լիքը հուր ու կրակ վրշտերով...

Ե՛ւ քայլում եմ, և՛ լրսում եմ շատ հեռւից
Մարկանց ձայնե՜ր, լաց ու կրսկիծ հոգէմաշ,
Ե՛ւ վազում եմ սիրտս ուռած յուզմունքից,
Ինձ քաշում են այդ ձայները աղէխարշ...

Օ՜, գալիս եմ... թող դան տարիք ու թրուչեն,
Մօտենում եմ, իրաւազո՜ւրկ խեղճ եղբայր,
Կը բացւի լոյս — մարդիկ ինձ կը ճանաչեն,
Այն օրւանից նոր բոդդ կը դայ քեզ համար...

1903 թ. 1 Յունվարի.
Ղզար։

4-4-3 (4) 16 abab

Ն Ր Ա Ն

Քունս կրտրած օր ու գիշեր
Քո սիրով եմ միշտ էրւում,
Ե՛ւ վիշտ, և՛ խինդ, սրբազան սէր,
Քեզ համար եմ միշտ երդում...

Ինչպէ՜ս կուզեմ կողքիդ նրստել,
Սիրով փարւել քո կրծքին,
Էրւած սրտով սէրրս պատմել,
Սիրտս տալ քեզ, ի՛մ անգին...

Եւ քո մատաղ, անդարդ կրծքում
Սիրոյ հրդեհ բրռընկել,
Ու սև վրշտիս խորունկ ծովում
Անցաւ սիրտդ ողողել...

Որ դու ըդդաս իմ վիճակիս
Ծանրութիւնը թունաւոր,
Ու ինձ սիրես, ընկեր լինիս
Դարպոտ սրտիս մենաւոր...

1903 թ. 10 Փեբր.
Ղզար։

8/7 (4) 16 abab

* * *

Միայն քեզ եմ ես նրւիրում
Անկեղծ սրտիս երգն ու սէր,
Շուշան կրծքիդ զոհ եմ բերում
Աղնիւ զրրիչ, վառ յոյսեր...

Աղատ դաշտում տե՛ս բացւել են
Բանդ-Ռանդ ծաղիկներ,
Տես և սիրտս, ուր ծրնւում են
Անուշ սիրոյ նոր երգեր...

Շատ եմ տանջւել, շատ եմ երգել,
Էրւել եմ միշտ քեզ համար,
Սիրի՛ր դու ինձ, կեանքս է մաշւել
Ղարիբ ընկած սարէ սար...

1903 թ. 14 փետր.
Ղզլար։

8/7 (4) 12 abab

* * *

Սիրեցիր դու ինձ, որպէս փայլփրլուն
Քո վառ իղձերի տենչանքն անմէկին,
Որպէս քո կեանքի փարոս շողշողուն,
Եւ որպէս ընկեր քո հուր վրշտերին...

Սիրեցիր ծաժուկ և դաղտնի սիրով,
Մարդկանցից հեռու արցունք թափեցիր,
Անքուն գիշերներ, կեանքդ մաշելով,
Գուցէ յուսահատ մահ աղերսեցիր...

Անցա՜ւ ամեն ինչ... Բաղդը բաժանեց...
Դու արդէն կեանքի ասպարէզ մրտար,
Բայց ե՞ս... Ո՞վ գիտէ ինչ է պատրաստում
Անգութ ու դաժան բաղդըս ինձ համար...

Օ՜, մի՛ մոռացիր... կրրկին ինձ սիրի՛ր,
Ինչպէս եղբօրդ սրրբաղան սիրով—
Ահա մաքուր սէր... Քոյր իմ, աղօթի՛ր,
Մաղթիր ինձ եռանդ, միշտ վառ յոյսերով...

1903 թ. 15 փետր.
Ղզլար։

5-5 (4) 16 abab (xaxa 1 rey)

Քոյր իմ...

Ահա՛ մի փընջիկ ազգի ցաւերից,
Ահա մի կաթիլ նըրա վըշտերից.
Սորանից աւել գեղեցիկ ընծայ
Ձեզ համար ընտրել չը կարողացայ...
Կարդացէք Դուք միշտ սէ՛ օրով ժրնւած
Մեր եղբայրների կեանքը դառնացած,
Մի քանի ժամով սըլացէք քամբախտ
Անտէր ու աւեր երկիրն հարաղատ...
Ուր արիւնն է ծով, արցունքոտ՝ աչեր,
Ուր բանդ ու շըղթայ և հըլու «խեղճեր»,
Ուր գեանին փըռուած, դաշունը սըրտին
Հայրն է շընչասպառ աւանդում հոգին,
Ուր մայրը թուլցած, արնոտ, ուժասպառ
Որդու գիակն է համբուրում խելառ,
Ուր մանուկ տըղան կաթի փոխարէն
Արիւն է ծրծում մօր պատռած սըրտէն...
Ձեր քընքուշ սիրտը թող մի բոպէ
Ըզգայ տանջանքը որդեկորոյս մօր,
Եւ Ձեր աչերից թող արցունք քաղէ
Անտէր զաւակի լացը սրդաւոր...
Թող այդ նիւթ լինի Ձեր օրօրներին,
Երգեր հիւսեցէք, քնքուշ ու մեղմիկ
Ձայնով պատմեցէք Ձեր Անահիտին
Իւր եղբայրների տանջանքը սաստիկ...

1903 թ. 3 Մարտ. Ղզլար։

5-5 24(25) с. П.

Էջդ հանդարտ հոլով

* * *

Էլ մահուան համար ես չեմ աղօթում,
Տրխուր օրերից յուսահատ ճընշուած,
Հրդեհ է վառւում իմ մատաղ սրրտում,
Ապրել եմ ուզում — ապրել անկասկած...

Եւ դաղափարի կրուի պատրաստուած,
Օ՜, տանջւող եղբայր, քո գիրկն եմ ընկնում,
Մենք կեանքի խաչը իրար հետ ուսած
Ցառաջ կը դիմենք... Ա՛ռ, ձեռքս եմ մեկնում...

1903 թ. 12 Մարտ.
Ղզլար։

5-5 (4) 8 ահեղ ճաճա

* * *

Նորից երջանիկ օրեր խընդութեան,
Նորից սիրոյ երգ, նոր բաղդի եկին,
Նորից հընչում է կոչնակ հաշտութեան
Եւ ես սիրում եմ, հաւատում կըրկին...

Հովիտ ու անտառ — բնութիւնն ամբողջ
Կորած են կանաչ գարնան զարդերում,
Թէ առւի կարկաչ, թէ ծաղկի բողբոջ
Ինձ անուշ ծայնով սէր են աւետում...

Եւ իմ հալածւած մենաւոր սըրտում
Կենդանանում են վաղեմի իղձեր—
Ծընկաչոք, հանդիստ աղօթք եմ կարդում,
Օրհնում եմ և՛ կեանք, և՛ ծաղիկ յոյսեր...

Օրհնում եմ և քե՛զ, որ գերիչ ժրպտով
Վանեցիր մաշող կասկածը սըրտիս,
Եւ ջինջ աչերիդ պայծառ շողերով
Նոր կեանքի գարուն բերիր, Սիրուհիս...

5-5 (4) 16 սեպտ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ւ...

Քրիստոս յարեա՛ւ... Ամեն տեղ նոր կեա՛նք,
Ուրախ են մարդիկ, ուրախ բընութիւն,
Օդն են սրլանում ծիծաղ ու բերկրանք,
Երկիրն էլ նորից առաւ յարութիւն...

Ա՜խ, միայն այստեղ, մեր սըրտի խորքում
Մեր հին «եսն» է միշտ արթուն գործում,
Էլի հին ղէնքեր միմեանց դէմ սրրած,
Մոլի վարք ու բարք, միտումներ նեխւած...

Ողջ բնութիւնը նոր կեանք ըստացած
Բիւր դայլայլիկով սէր պիտի շընչէ,
Իսկ մե՛ր, մե՛ր սիրտը՝ ե՞րբ պիտի զրտւած
Վերածընութեան սուրբ երգը հընչէ...

1903 թ. 1 Ապրիլ.
Ղզլար

5-5 (4) 12 п.с.

Ի՞ՆՉ, ԴՈՒ ՉԱՆՉՐԱՑՄԸ՞Ր...

Ի՞նչ, դու ծանծրացա՞ր ինձ հետ տանջելուց,
Եւ հանդաւ քո մէջ նախկին սէր դորով,
Ցոդնեցի՞ր ծածուկ արցունք թափելուց,
Ուզում ես ապրել, խաղաղ, պերճ կեանքով...

Մի՞թէ այդքան շուտ քեզ վերայ ազդեց
Մոլի կարծիքը կոյր շրջապատիդ,
Եւ ազատ կեանքից իւր գերին դարձրեց
Բրոնի փրշրելով լարերը սրրտիդ...

Օ՜, ըստրուկ զաւակ դու փարթամ կեանքի,
Փախի՛ր, հեռացի՛ր... Թող մընամ մենակ,
Թող սիրտս կաթի թոյնը տանջանքի,
Թող մէջքս ծրուի հոգսի բեռան տակ...

Հոգ չէ... ես մենակ կանցնեմ իմ ուղին,
Իբրև մի դինւոր սուրը ճրշմարտութեան,
Աստլով ոսկին, ոսկուն պաշտողին,
Մենակ կը տանջեմ մինչև գերեզման...

1903 թ. 9 Յունիսի.
Ղզար։

5-5, 4 16 aba

к любимой, но с сознан. отчетли

ՉԱՆ - ԳԻԼՈՒՄ

(Ժողովրդական մոտիւներից).

Ա.

1.

Գիւլում եմ, գիւլմ չունեմ,
Ղարիբ եմ, ընկեր չունեմ,
Մի վիրաւոր թռչուն եմ,
Սրրտացաւ սիրտս չունեմ...

7 ծկ. aaxa

2.

Կրռունկները անցկացան,
Ինձ էլն տրւին անցկացան,
Ղարիբիս եթիմ թողին,
Երգեցին ու անցկացան...

7 ծկ. aaxa

3.

Կրռունկներ բարև տրէք,
Խեղճ մօրս խապար տարէք,
Ասէք — ձեր ջիւան տրդէն
Մեռնում է... մահին հասէք...

3-4 aaxa

4.

Դարդերս նոր եմ դրրել,
Ու անդութ եարիս ղրրկել,
Անասուածը թող կարդայ,
Թէ ինչքան ցաւ եմ կրրել...

? 7 ծկ. ստ 3-4 aaxa -

5.

Գարունս անցաւ - գընաց,
Վարդ - սիրուս փուշը մընաց,
Ինչիս է պէտք էլ կեանքը,
Սիրտս էրելով մընաց...

7 ծկ. aaxa

6.

Թող դան հասնեն հաւարիս,
Դեղ դընեն խորունկ եարիս,
Կամ թէ մի պուտ արցունքով,
Թրրջեն քարը սընարիս...

7 ծկ. aaxa

Բ.

1.

Դուման փատթեց սարերուն,
Ղարիբ սիրտս երերուն,
Եար ջան, շատ մի՛ պարծենա,
Անէծքս զուր չի՛ կենա...

4-3 aabb

2.

Սիրել եմ ու օր չունեմ,
Մոռնալու հընար չունեմ,
Եար ջան, շատ մի՛ պարծենա,
Անէծքս զուր չի՛ կենա...

7 ծկ aabb

3.

Լրսեցիր մորրդ խօսքին,
Սէր տրւիր հարուստ տրղին,
Եար ջան, շատ մի՛ պարծենա,
Անէծքս զուր չի՛ մընա...

7 ծկ. aabb

1903 թ. 2 Դեկտ.
Ղզլար։

I տող - տեսակ ծեղեցիկ ուսցիչ
և դրագետ, տգէտ մարդ. շնչ.

II տող - տեսակ ծեղեցիկ և ֆեքրատ
գրագետ ուսցիչներ

Թո՛ղ դողայ...

Թո՛ղ դաղայ քամին, սուլէ՛ կատաղի,
Թո՛ղ ծիւնը դիզուի ժայռերի նման,
Թո՛ղ ոռնայ բուքը, ջընջէ՛ ահռելի,
Երկինքը թափէ՛ հուրը բարկութեան,
Ես չեմ սարսափի... Այստե՛ղ, կրծքիս տակ,
Ունեմ և՛ դարուն, և՛ արև-աչեր,
Ե՛ւ համբոյր-աստղեր, և՛ սիրոյ-առուակ,
Ե՛ւ մի պաշտելի էակի պատկեր...

Թո՛ղ անգութ մարդիկ կրծքները ծեծեն,
Թո՛ղ ճիչ, աղաղակ, հանեն սարսափած,
Թո՛ղ գրժուած սրրտի սև թոյնը թափեն,
Թո՛ղ ինձ անարգեն, տանջեն կուրացած,
Ես չե՛մ տրրտընջայ... առաջ կը նեաւեմ
Անեարկի՜ւղ, հաստատ հաւատով անբիծ,
Իսկ այն օձ-մարդկանց ես մանկուց գիտեմ
Լոկ արհամարել սրրտիս խորքերից...

5-5 (8) 16.aba.b

Սոսնամ, թանչեր. սար ← սար
սասանա սոսնամ

ԾՈՎԻ ԱՓԵՐՈՒՄ

I.

ԾՈՎԱՓԵԱՅ ԳԻՇԵՐ

Դիւթիչ պատկե՜ր... Խորին դիշեր, դիշեր
անվերջ տենչերի,
Գիշեր դերիչ, դիշեր չրքնաղ սիրոյ տանջող
յոյզերի...
Անծայր երկինք, անթիւ աստղեր, արծաթ
լուսնի վառ շողեր,
Անհուն խոր ծով, խաղուն ալիք, լրռիկ նիրհող
ժայռ ափեր...

Ծովի պերճ կուրծք, աստղի համբոյր, գգւանք
մանուկ վառ սրրտի,
Ծովի նաղանք, լուսնի շողքեր, շողքեր սիրոյ
պրճրանքի...
Անհուշ դիշեր, պար ու երգեր, երգ ու խընդում
երկրնքում,
Ծովի ծփանք, մանրիկ ալիք, ալիք ծովի
խոր կրծքում...

1903 թ. 10 Օգոստ.
Պետրովսկ։

4-4-4-3 (4) 8 c.

Լոգ - պետրե սոսնամ

II.

ԾՈՎԱՓԻՆ

Ալիքները մեղմ ճրփիւնով մօտենում են
քարափին,
Շոյում, լիզում, խաղում հետը ու ծով վազում
խընդագին,
Աստղ ու լուսին հազար ցոլքով լողանում են
խոր ծովում
Ու իրանց մերկ, պերճ սիրուհու անհուն
կուրծքը համբուրում...

Եւ ես նըստած լուռ նայում եմ, նայում եմ
այս պատկերին,
Ուր ոչ վիշտ կայ և ոչ տանջանք, ոչ խաբում
են սիրածին,
Ու խեղճ հոգիս օտար ու խորթ լուռ յուզ-
ւում է լերկ ափին,
Սիրաս՝ կրակ, սիրաս՝ մեծ ցաւ, կրծոտում է
իմ հոգին...

Շուրջս դիշե՞ր... և ծով, երկի՞նք, և վառ-
լուսին, և աստղե՞ր,
Միմեանց դգւած, իրար կըրծքի թափում են
ջերմ համբոյրներ,
Իսկ ես օտար, երջանկութեան ու կախարդիչ
այդ կեանքին
Ապուշ կըտրած դեռ դիտում եմ, դեռ նըստած
եմ ծովափին...

1903 թ. 11 Օգոստոսի.
Պետրովսկ։

III.

Մըռընչէ՛, ո՞ ծով, ուժգին փըրփըրի՛ր,
Երկինքն արժան չէ՛ քո դգւանքներին,
Յուզւիր և սիրտ իմ, թոյնըդ ժայթքի՛ր,
Աղջիկը չարժէ՛ քո հառաչներին...

1903 թ. 12 Օգոստոսի.
Պետրովսկ։

IV.

Գոռում էր ծովը և ալիքներով
Ափը ողողում,
Լալիս էր սիրաբս ու արցունքներով
Կուրծքիս լրանում...

Ծովը աստղերի սիրով բրոնված
Հեծում էր ուժգին,
Սիրաբս էլ պատկերիդ վաղուց կարոտած
Լալիս էր կրկին...

12 Օդոստոսի.
Պետրովկ:

10/5 (4) 3 ակաբ

V.

Աստղ-աչերը պերճ դիշերին
Ծովի ծոցը նայեցին,
Ծիծղուն ծովի չքնաղ կուրծքին
Արծաթ-համբույր մաղեցին:

Ծովը խնդաց ու խոր կրծքում
Վառ աստղերը դողացին,
Ալեակները ծովի ղրկում
Նոզքերի հետ խաղացին:

Եւ վերացած այս աշխարհից,
Սիրաբս ուրախ կը հևար,
Հեռո՜ւ, հեռո՜ւ, ցաւի՜ց, հոգսից,
Ծովի նրման կը ծրփար...

Ու մի տենչանք սեղմած կրծքիս
Թրռչում էի դէպի վեր—
Բայց ո՞ւր, ո՞ւր էր ծրգտում հոգիս
Գոգն անհունի՜—դէպի վեր...

Չը հասկացայ... ու աստղերը
Լողում էին դեռ ծովում,
Անհոգ ծովի ալիքները
Խաղում էին ու երգում...

13 Օդոստոսի.
Պետրովկ:

8/7 (4) 20 ակաբ
սոցն ուշա և տրուա
(գր. Հարամ. "գրում ցոց")

VI.

Ասղոտ գիշեր է... անուշ կը ծրփան
Կայտառ ալիքներն ծովի ջինջ կըրծքում,
Հազար մի ցոլքով յոյշերբս զարթնան,
Սիրոյ յոյշերբս իմ հանդած սրրտում...

Էհ, առաջ սիրտս էլ մեղմիկ կը ծրփար
Լուսին-աղջըկայ սէր ցոլքերի տակ,
Ու սէրս էլ նազով ուրախ կը ցոլար,
Քանց էն ասղերը սիրուն ու յստակ...

Սև ամպերն եկան գիղուեցին սրրտիս,
Սրրտիս տիրուհուն աչքերէս տարան,
Ու էն օրւանից մեռաւ խեղճ հոգիս,
Սիրտս խաւարեց, երգերս էլ մարան...

Զառ-զարուն սէրս էլ չի ծաղկելու
Իմ սիրտ-պարտիզում հազար բուրմունքով,
Անուշ սիրուհիս էլ չի դառնալու,
Մ՞խ, նա շո՞ւտ խաբուեց օձ-մարդկանց խօսքով...

Ու էն օձ-մարդկանց թոյնը իմ սրրտում,
Շրջում եմ մոլոր շէն-սիրտս աւեր —
Շո՞ւտ ինձ տեղ տուր ծով, տեղ տուր քո կրրծքում,
Գրրկեմ քեզ, հանգչեմ, թաղեմ իմ ցաւեր...

Պետրովսկ։

5-5 (4) 20 abab

VII.

ԿԱՏԱՂԱԾ ԾՈՎԻՆ

Ի՞նչ ես փրրփրրում, խելագար դու, ծով,
Շաչում, մրռընչում, ոռնում ու լալիս,
Կատաղած սանձարձակ դոռ ալիքներով
Ափերիդ խրփում, կրծում, եռ-գալիս...

Տե՛ս, ժայռ ափերդ անդգայ ու քար՝
Ձեն էլ վրդովում... դուր է հառաչանք...
Օ՜, ներրանք խո՞ւլ են, անգո՞ւթ, անարգա՞ր,
Ներրանց օտար է քո վիշտ ու տանջանք...

Որքան դու կուգես հառաչէ ու լայ,
Պրդտոր հայեացքով ափերդ գիտէ,
Ցաւատանջ սրրտիդ սև խոցերը բաց,—
Քար սիրտը երբէ՛ք ըղդալ չը գիտէ...

Պետրովսկ։

5-5 (4) 12 abab

Մի՛ ՀՐՃԻՐ ԵՐԲԷՔ...

Մի՛ հրճւիր, ընկեր, որ բաղդը դաժան
Կեանքի վառ դարուն քեզ պարգև բերեց,
Մի՛ հրճւիր նաև, որ ինձ միմիայն
Վի՛շտ, արցունք, տանջանք, սուգ բաժին
Թողեց...

Կանցնի այդ դարուն, կանցնի և կանաչ,
Կը դողայ ցրտից քո դատարկ հոգին,
Դու կը վրհատաւես... հարւածի առաջ
Աշնան խոտի պէս վայր կընկնես գետին...

Իսկ ես՝ որ մանկուց սովրել եմ տանջւել
Մայրիկիս ծոցում, սիրոյ փոթորկում,
Հերոսի նրման դիտեմ և կրուել...
Կեանքը ինձ քաղցր է և վրշտի դրկում...

28 Հոկտեմբերի.
Ղզլար։

ԾԻԾԱՂ ՈՒ ԱՐՑՈՒՆՔ

I.

ԿՆՈՋ ՍԻՐՏԸ

Կնոջ սիրտն է մի կրշեռք,
(Այդ ասում են հանաքում)
Ոսկին որտեղ շատ բեռէք,
Լուծն էլ այն կողմն է թեքում...

1903 թ. 10 Հոկտ.
Ղզլար։

II.

ԶՈՒՔԱՆՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՓԵՍԱՑՈՒԻՆ

Թէ փող ունես,
Այդ ասա՛ մեզ,—
Թէ գիտ ունես,
Թէ ջահէլ ես...

Պատիւ ու փառք,
Աղչիկ ու կառք

Քեզ ընծայ տանք,
Սեղան բանանք,
Վերև կանչենք,
Զօռենք, խնդրենք,
«Աղա՛ փեսայ,
Համեցէք վե՞ր,
Էս լաւ փափուկ
Կրատորից կեր...»

Իսկ թէ տրկլոր
Քաղցած փորով
Վարժապետ ես
Դատարկ ջէբով,
Հայդէ՛, պըրծիր,
Շուտ դուրս կորիր...

24 Նոյեմբերի.
Դզաբ։

ԴԱՏԱՐԿԻՐԻՆ ԸՆԿԵՐ...

Էյ, դարիբ ընկե՛ր, էդ ո՞ւր ես գընում,
Էդ անապատով, ամայի երկրով,
Ի՞նչ հուր-տենչանք է քեզ առաջ տանում
Էդ դրժւար ճամբով, խորունկ ձորերով...

Կոյր է էդ աշխարհն — խաւարի ոգին
Բաց, թեւատարած տիրում է այնտեղ,
Քարոտ է ճամբան, տատասկոտ ուղին,
Ժայռե՞ր ու խութե՞ր ցրցւած են այնտեղ...

Ու էդ ժայռերի հազար խորշերում
Սողում են օձե՞ր, ժանտ ու թունալի՞,
Ու էդ ձորերի հազար խոռոչում
Ոռնում է գայլը արեան ծարաւի...

Տանջանք, սով, զրկանք, ծարաւ ու հոգսեր
Սպասում են քեզ սարի գագաթին,
Սուրբ է և իղձդ, ես գիտեմ, ընկե՛ր,
Որ կլանել է քո մատաղ հոգին...

...Ու դու զրկաբաց դիմում ես այնտեղ
Քո գաղափարիդ խաչը շալակիդ —
Օ՜, դու պատրաստ ես խաչե՞լ իսկ այնտեղ
Փրկէ պրսակը հպարտ ճակատիդ...

Դէ՜հ, զրնա՛, ընկեր, թող վառ հաւատով
Քեզ առաջ մրդէ «գեղեցկի ոգին»,
Իսկ արշալոյսը հազար շողերով
Թող պրսակ հիւսէ քո անմահ գործին...

1903 թ. 1 Նոյեմբ.
Ղզլար։

5-5 (4) 24, ապան

ՄԱՐՏՆՁԻ՛Ր, ՄԵՌԻ՛Ր...

Վա՛յ նրրան, ընկե՛ր, որ սովոր է միշտ
Իբրև լուռ դիտող անհոգ ու հանդիստ
Նայել փրրփրրուն ընթացող կեանքին,
Նրրա եռացող գորոգ փոթորկին...
Ով որ անտարբեր տեսնում է անյաղ
Մրռայլ գիշերւայ ահարկու կայծակ,
Ոռնացող ալիք, նաւի փրշրանքներ,
Կատաղի կրռիւ, աղի արցունքներ...
Ով եղբօր անկման լինում է վրկայ,
Նայում է անցա՜ւ, խաղա՜ղ, անրզգա՜յ,
Ով անյոյզ սրրտով լրսում է միայն
Նրրանց յուսահատ կոչը օգնութեան,
Ով ծով չի նետւում, սուրբ կրռւի հանդէս,
Կուրծքը չի եռում քաջ հերոսի պէս,
Ում չէ զրրաւում ազնիւ նրպատակ,
Սրրբազան կրռիւ ու մաքուր վաստակ,
Թող ըստոր հոգով թաղւի վատաբար
Նեխւած ցեխի մէջ, անարգւած խպառ...
Իսկ դու՝ որ այդ մեծ ծովի փոթորկում
Լողում ես անվախ ալիքի դրրկում,
Դո՛ւ որ ծրգտում ես քո գաղափարի
Կէտ-նրպատակին, դո՛ւ զինւոր արի,

Որ ապրում, շընչում, կեանք ես վայելում
Խաղաղ կացութեան հուրը քո սրբում,
Դու՝ որ պատրաստ ես կանգնել օգնութեան
Թէ՛ խօսքով, սրով, թէ՛ գործով նրբան,
Թշուառ եղբօրդ, տառապող, խրոխտ
Եւ դատը վարել գրչովդ կարուկ,
Օ՜, դու մարարնչի՛ր, կրուի՛ր աննրհանչ,
Ցատնի՛ր աշխարհին քո վերջին պահանջ,
Գոնէ ոչ թէ մենք, մեր որդին թշուառ
Կը լինի մի օր ազատուած խսպառ...
Ա՛ռ քեզ այդ կրուում, թող ընկեր լինին
Մեր սէրն ու ձեռքը, մեր սիրան ու հոգին,
Մեռնե՛նք կրուի մէջ, անվախ, անհառաչ,
Մօտ է սուրբ լոյսի փրրկարար ճաճանչ...

1903 թ. 3 Նոյեմբերի.
Ղզլար։

5-5, 36, с.

Սարի խոտը ծեղնէ ծեղ,
Եղբայր երթանք մխանեղ.
Որ հարամին վերա տայ
Գելուխս տամ գլխիդ տեղ...
(ժողովրդական)

I.

Օ՜, ԵԹԷ ՃԱՅԹԻ...

Օ՜, եթէ ճայթի երկինքը ահեղ,
Ու բոցոտ շանթեր զալարուին այնտեղ,
Օ՜, եթէ մարդիկ և այս նենգ կեանքում
Թոյն տան խրմելու մահուան բաժակում,
Դարձեալ չեն կարող ընկճել իմ հոգին,
Չեն կարող փոխել և իմ սուրբ ուղին —
— Կամ մահ կրուի մէջ սրբազան դաշտում,
Եւ կամ կեանք խաղաղ ազատ աշխարհում...

5-5, 8, с.
Սայ. Մարգա

II.

ԻՄ ՍԷՐԸ

Բուք ու բորան ցուրտը փրչեց
Վարդ ու ծաղիկ էլ չը կան,
Սիրոյ վիշտը սիրտս կրծեց
Զառ-յոյսերիս էլ չը կան...

Անցան օրե՞ր... Գարունն եկաւ,
Սրտաբ-աշխարհ դիլ խընդաց,
Բայց խեղճ սիրտս վիշտը կերաւ
Ու էլ սիրտս չը խընդաց...

III.

ՔՈՒՐ ՋԱՆ, ԱՆՍԻՐՏ ՄԱՆ ԿՈՒԳԱՄ

Ամպերն իջան սարի գոշին,
Մութը ընկաւ — լոյս չը կայ,
Երկնից մաղեց լուսնի փոշին,
Աղբօրդ համար քուն չը կայ...

Կեանքի ծովում ճամբէս ծրռաւ,
Ժեռ-սարերուն դէմ եղայ,
Սէր-հրդեհը սիրտս առաւ,
Էլ լոյս աստղիս չի՛ շողայ...

Ա՜խ, սա՛-մարդիկ կեանքս կերան,
Օրիս գիշեր, սև՜ արին,
Ջան ու ջիգեար եարիս տարան
Ու ալ-վարդիս փուշ արին...

Ու ես ընկած սարե՞ր, չոլե՞ր,
Ղարի՞ր, մենակ ժուռ կուգամ,
Սիրոյ տօթից սիրտս է հալէր —
Քուր ջան, անսիրտ մանկուգամ...

IV.

ՍԻՐՏՍ ՈՒԶԵՑ...

Սիրամ ունէի խոր ու անծայր,
Քանց վառ-արև, նուրբ գիշեր,
Անփայլ աստղին բիւր շող կը տար,
Անկեանք սրրաին բոց ու սէր...

Մ՞խ, եարը ուզեց, սիրտս ուզեց,
Ու սիրտը առա՜ւ, հեռացաւ,
Քեաֆուր, անսիրտ մօրը լրսեց,
Սէր ու երդում մոռացաւ...

Օ՜, սրրտիս տեղ միս է հիմա,
Անկեանք, արնոտ, անընկեր —
Սուտ է, քուր ջան, կեանքում չը կայ
Սրրտանց երդում, անկեղծ սէր...

1903 թ. 5—7 Նոյեմբ.
Ղզլար։

Մ՞Խ, ԱՆՍԻՐՏ ԵԱՐ...

Երազիս մէջ կռիւ տեսայ —
Թուր ու թրվանք կը շողար,
Ու կռուի մէջ եարիս տեսայ —
Դուշմանիս հետ կը սողար...

Քընէս զարթնայ — հարսանիք կար,
Դուրս վազեցի տեսնելու —
Մ՞խ, իմ եարն էր, պրսակ կերթար,
Դուշմանիս հետ ապրելու...

Ու էն օրից սէրրս դառաւ
Կրրակ, կրսկիծ ու մրռմուռ,
Զահէ՞լ, ջիւան կեանքս կերաւ,
Մ՞խ, անսիրտ եար, վախ քեաֆուր...

1903 թ. 14 Նոյեմբ.
Ղզլար։

Ա՜խ, ՉՈ՞ՒՐ, ԵՍ ՉՈՒՐ ՄԱՆ ԿՈՒԳԱՄ...

Ամպերն ելան, երկինքն առան,
Զառ աստղերը սեւացան,
Հաւքերն եկան շարան-շարան
Սարի գլխովն անցկացան...

Մութերն ընկաւ — կորա՜ւ ճամբէս,
Ա՜խ, չիտեմ թէ ո՞ւր կերթամ —
Ձեռքս ծոցիս — եթիմի պէս
Ժէռ-քարերուն դէմ կերթամ...

Եա՛ր, քու սէրը սիրտս վառեց,
Աշուղ դարձայ, դուրս ընկայ —
Քու կարօտով սիրտս մաշուեց,
Սաղ ու շրի ձեռք առայ...

Ու մրժի մէջ ես կեղնեմ վե՞ր
Միտքս շուտ... ի՞նչ անեմ...
Սիրտս՝ մենակ, սիրտս անընկեր,
Անուշ եարիս կը փընտրեմ...

Սարերու մէջ ճամբէս ոլո՞ր,
Էրուած սրտով ման կուգամ —
Հարուստ տրդէք եարիս բոլոր,
Ա՜խ, դո՞ւր, ես զուր ման կուգամ...

1903 թ. 15 Նոյեմբ.
Դզլար։

8/7 (4) 20 տող

Ա՜խ, ՄՕՐՍ ՏԻԷ՛Ք...

Ղարի՛ք եմ, օտա՛ր, ատուած ամենքից,
Հրսկայ ցաւեր կան իմ խորունկ սրտում,
Սիրոյ խո՞ց ու վէ՞րք, մրռմուռ ու կրսկիծ
Հոգուս մէջ ս.ռած ման կուգամ տրրտում...

Իմ անգութ եարը կանաչ ու կարմիր
Պրճընուած սիրտս ուղեց ինծանից —
Ու ծեռների մէջ տրրորե՞ց, ճրմլեց,
Անկեանք, անարիւն յետ տուեց նորից...

Ու շիրմիս բոլոր շրջում եմ եարոտ,
Ղարիք, անընկե՞ր, անկեանք ու անսէր,
Մայրիկիս քընքուշ սիրուն եմ կարօտ —
Ա՜խ, մօրքս տուէ՛ք, որ սիրտս բուժէր...

1903 թ. 17 Նոյեմբ.
Դզլար։

5-5 (4) 12 տող

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՑՆԻՑ

I.

Դու, ծկնորսի սիրուն աղջիկ,
Քո նաւակը ափ հանիր,
Եկ դու այստեղ, նըստիր մօտիկ,
Ջեռքըդ տուր ինձ ու խօսիր...

Դու, որ երբէք չես վախենում
Կատաղած ծովի ալիքից,
Կըրծքիս վըրայ դիր գլուխդ,
Մի՛ վախեցիր ներքանից...

Սիրտս ծովին շատ է նըման,
Ունի ժայռեր, փոթորիկ,
Նորա խորքում կը քընանան
Մարգարիտներ գեղեցիկ...

1900 թ. 14 փեբր.

8/7 (4) 12 ապրիլ

II.

Մրտայ այնտեղ՝ ուր սիրուհիս
Երդբուեցաւ ինձ լինել
Հաւատարիմ, անկեղծ սրրտով
Անվերջ, անհոուն ինձ սիրել...

Ուր երբեմն ցած թափուեցան
Նրրա աչքից արցունքներ —
Տեսայ այնտեղ՝ որ կը սողան
Ժանտ, թունալի՜, սև օձեր...

1900 թ. 20 փեբր.

III.

Ա՜խ, քո կարմիր վառ թշերդդ
Վառուող ամառ կերևան,
Բայց քընքուշիկ քո սրրտի մէջ
Ցուրտ ձրմեռ է, բուք-բորան...
Եւ կը դայ օր՝ ցուրտ ձմեռը
Կը տիրանայ այտերիդ,
Իսկ հրրակէզ վառ ամառը
Կիշխէ փափուկ քո սրրտիդ...

1900 թ. 5 հոկտ.
Մարց գիւղում։

IV.

Ես էլ ունէի հայրենի երկիր,
Նա գեղեցի՜կ էր.
Այնտեղ իմ գլխին կօրօրուէր ուռին,
Բայց այն երա՜զ էր...

Շուրջ ընկերների վառվռուն շրջան —
Եւ սիրոյ խօսքեր
Ամեն կողմերից ականջիս հասան,
Ա՜խ, այն երա՜զ էր...

1901 թ. 3 փեբր.
Իջմիածին։

10/5 (4) 3 ābāb

V.

Վաղո՜ւց է, որ չեմ հաւատում երկրնքին,
Որի մասին միշտ խօսում է քահանան,
Հաւատում եմ միայն քո սև աչերին,
Ահա այդ է իմ աշխարհը երկնային...

Վաղո՜ւց է, որ չեմ հաւատում Աստծուն...
Որի մասին միշտ քարոզ եմ ես լսում,
Օ՜, ես միայն քո սրբին եմ հաւատում,
Սիրտդ է միակ իմ Աստուածը, աշխարհը...

Վաղո՜ւց է, որ չեմ հաւատում դևերին,
Եւ դրժոխքի անտանելի տանջանքին,
Օ՜, ես միայն հաւատում եմ չար սրբերդ,
Հաւատում եմ կախարդական աչերիդ...

1901 թ. 13 փեբր.
Իջմիածին։

4-4-3 (4) 12 (c,) + χορος.

VI.

Երբ ես նրստած եմ սիրուհուս կողքին,
Հոգիս սրլացող արժիւ է դառնում,
Հարուստ եմ ըզգում ես ինձ այդ ժամին
Եւ ողջ աշխարհը ինձ է պատկանում...

Իսկ երբ հանելով դառն ու խոր հառաչ
Ես բաժանւում եմ հեռու նրրանից,
Մ՞խ, վրհատւում եմ, ու ինչպէս առաջ
Մի մուրացկան եմ ես լինում նորից...

1901 թ. 9 Մարտի.
Նոր-Բայազէտ։ 5-5 (4) 8 abab

ՏԻՐՏՉԵՐԻՑ

I.

Կրրկին մրխում է խեղճ արևելքը
Դեռ թարմ արիւնով,
Կրրկին լրսւում է լաց ու ազաղակ
Սուր հառաչներով...
Նորից կոտորած...
Էլի արդար է ուրախ դահիճը,
Իսկ խեղճ զոհերը չար զրրպարտութեան
Կրրկին մատնւած...

1898 թ. ~10/5 (?) xaxa bxxb
10/5/10/5 5/10/10/5

II.

Արցունք մարդկային թափուում ես դու միշտ՝
Վաղ առաւօտեան, թէ ուշ գիշերին,
Թափուում ես անվերջ, աննկատելի՜,
Թափուում ես անթի՛ւ, անիմանալի՜,
Ինչպէս հոսում է առուակն տնձրևի
Մո՞ւթ, խաղաղ ժամին, աշնան գիշերի...

1898 թ.

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ

I.

Ես չեմ ցանկանում աշխարհն իմանար
Իմ պատմութիւնը խորունկ ու գաղտնի,
Ինչպէ՞ս սիրեցի, ինչ բանի համար
Մենակ ու լրիկ տանջանք կրեցի...
Իմ գաղտնիքներին միայն դատաւոր
Խիղճս է մենակ ու Տէրն ահաւոր —
Եւ նրանց միայն սիրաս հաշիւ կը տայ,
Նրանցից մենակ կը խնդրէ ներում.
Օ՜, թող պատժէ ինձ Տէրը երկնաւոր,
Որը ըստեղծեց տանջանքիս բոլոր...

Վատ նախատինքը արդէօ ամբոխի
Չի՛ թուլացրնի վրսեմ սրբերին,
Թող աղաղակէ ալիքը ծովի՝
Ապառաժ ժայռը չի ընկնի գետին,
Որի ճակատը բարձր է ամպերից,
Երկու տարրերի բընակիչ է նա,
Բացի որոտից ու կայծակներից,
Որ իւր գաղտնիքը ուրիշին չի տայ...

1901 թ. 9 փետր.
Էջմիածին։

II.

ԹԱՄԱՐԱ.

Դարիալի խորունկ ու նեղլիկ կիրճում,
Ուր որ հոսում է Թերեկը մրթնում,
Կանգնած էր շատ հին մի ամրոց մրթին,
Սևին էր խրփում, սև ժայռի սրբին։

Այդ հին ու նեղլիկ բարձրը ամրոցում
Ապրում էր փառքով Թամար Թագուհին —
Նա գեղեցիկ էր հրբեշտակ անգին,
Նա նենգ էր, խարդախ, որպես չար ոգին։

Ամրոցի պայծառ լույսը ճրագի
Կէս գիշերային մրշուշի միջին
Իւր ոսկէ փայլով զարկում էր աչքի,
Հանգրստի կանչում յոգնած ճամբորդին։

Լրսւում էր դիւթող ձայնը Թամարի
Լրցուած տենչանքով ախտայոյզ կրքի,
Եւ կար այդ ձայնում մի մեղմ կախարդանք,
Ե՛ւ յաղթող մի ուժ, և՛ քրնքուշ թովչանք...

Եւ անլայտ փերու ձայնից դիւթական
Գալիս էր զինւոր, հովիւ ու իշխան,
Իսկ նրրանց վիմաց դուռը էր բացւում,
Դաժան նեռքինին ներս հրրաւիրում...

Փափուկ անկողնում Թամարը պառկած,
Թանդ զոհարներով կուրծքը զարդարած,
Նա ըսպասում էր մօտն եկող հիւրին,
Դրրուած էր կողքին փրրփրրան գինին.—

Կարծես թէ դատարկ ամրոցում նեղլիկ
Հարիւր վառվրռուն տրղայ ու աղչիկ
Պրսակւում էին այդ ուշ գիշերում
Կամ հարուստ Թաղման կարգ էր կատարւում...

Բայց հէնց ընկնում էր լոյսի վաղորդեան
Վառ ճառագայթը սարերի վրրան,
Մի ակնթարթում խորին լրռութիւն
Այդ հին ամրոցին տիրում է իսկոյն։

Միայն Թերեկն էր Դարիալի խորքում
Խոր լրռութիւնը բանդում, խանգարում,
Ալիքն ալիքի հետքից հրրելով,
Ալիքն ալիքին առաջ քրշելով,—

Ըշտապում էին փախցնել արագ
Նոքա իրանց հետ մի համր դիակ,
Ու լուսամուտում սիպտակին տալով
Մէկը ծայնում էր «դէհ, գընաս բարով»։

Այդ անջատումը այնքան քընքուշ էր,
Ձայնի հընչիւնը այնքան անուշ էր,
Որ ասես կըրկին նոր տեսակցութեան
Հրաւանք ու սէր էր խոստանում նըրան...

1900 թ. 15 Մարտ.

5-5 (4) 44, (c) хаа
abab

ՆԱԴՍՈՆԻՑ

I.

Ինձ մի ասէք՝ թէ նա մեռաւ — նա դեռ էլի
ապրում է,
Զոհարանը թող քանդուի — բոց իւր փայլը
տալիս է,
Թող կրտուի վարդը ոստից — նա դեռ էլի
բուրում է,
Օ՜, քընարը թող չախչախուի — ակկորդը էլի
լալիս է...

1902 թ. 21 Մարտ.
Ղզլար։

4-4-4-3, 4 գ.ա, abab

II.

ԹԱՐՄ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՌԱՋ

Я вновь одинъ—и вновь кругомъ
Все та-же ночь и мракъ унылый...

Կրկին մենակ եմ և շուրջս նորից
Պատել է գիշեր մրոտ, խաւարտչին,
Եւ օրհասական ահեղ մրտքերից
Զարդուած կանգնած եմ շիրմի առաջին.
Եւ մրտածում եմ՝ էլ ինչո՞ւ ապրել,
Էլ ինչո՞ւ կրուել և կամ տանջուել —
Երբ ես ոչոքի էլ չեմ սիրելու,
Ոչ ոքի համար չեմ աղօթելու...

1902 թ. 8 Յունիսի.
Ղզլար։

5-5, 8, п→с.

ՓՆՋԻԿ

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

ՈՒԶԵՑԻ ՔԵԶ ՄՈՌԱՆԱԼ...

Ուզեցի քեզ մոռանալ, հանե՞լ մրտքիցս քո անունը, ջընջել քո բոլոր յիշատակները...

Վառեցի վառարանս և այն բոլոր թղթերն ու նամակները, որոնց մէջ ես քո սէրն էի նկարագրել, արցունք թափելով, դառն հառաչ արձակելով կրրակի մէջ նետեցի...

Կրրակը բոցավառուեց ուղիղ այնպէս՝ ինչպէս իմ յոյսերս մի ժամանակ, երբ դեռ քո սրտում այրուում էր սէրս... և ապա փրլ-փլալով հանգաւ ինչպէս իմ յոյսերս այժմ, երբ դու դաւաճանեցիր ինձ...

Բոլորը այրուեց ու մոխիր դարձաւ...

Եւ ես կարծեցի՝ թէ այլևս ո՛չ մի բան չը մնաց, որը կարողանար յիշեցնել քեզ... Եւ ես կարծեցի՝ թէ մոռացայ արդէն քեզ...

Բայց ո՜... օրե՞ր անցան. և դո՛ւ, և քո պատկե՛ը, և քո վաղեմի վսեմ յիշատակները մի անկիւնում դեռ մխում էին ու դեռ այնտեղ աւերմունք էին առաջ բերում...

Այդ անկիւնը սիրտս էր...

Ու ինձ մնում էր սիրտս էլ այրել կրակի բոցերի մէջ, խորովե՞լ նրան, որպէս զի ես կարողանայի մոռանալ քեզ...

Բայց սիրտս այրել չը կարողացայ...

Եւ դու դեռ ապրում ես այնտեղ, անգութ...

1903 թ. 12 Յուլիսի.
Ղզլար։

II.

ԿՈՒՐԱՑԷ՛Ք, ԱՉԵ՛Ր...

Կուրացէ՛ք, աչե՛ր. դուք նայեցիք ծաղկող գարունքին, որ խընդայիք, բայց փայլուն զարդերով պճնւած գարունը այրւե՞ց, խարկւեց... չքացան ծաղիկները կարծես խանձւելով արևի կիզիչ ճառագայթներից...

Գարունը փոխւեց...

Կուրացէ՛ք, աչե՛ր...

Հանդարտ հոսող գետի խորքը թափանցեցիք պարզ ջրերի հետ խաղալու, բայց գետն անրդգայ, գետը համր ու մաքո՞ւր՝ պղտորւեցա՞ւ, փրփուր թքե՞ց և ոռնալով առաջ անցաւ, կարծես մի խորհրդաւո՞ր, ահաւո՞ր գաղանիք ծեր հայեացքից սուղւեց նրա վճիտ կուրծքը և վրդովմունք առաջ բերեց...

Գետն էլ փոխւեց...

Կուրացէ՛ք, աչե՛ր...

Դուք նայեցիք ջինջ եթերին դոնէ այնտեղ ծեզ ընկերներ գտնելու, բայց երկինքը խոժոռեց դէմքը, ամպերը դոռացին, կայծակները շողացին ու վերևից յորդ անձրևի արցունքներ տե-

ղացին... Դուք ի՞նչ, ի՞նչ ասացիք նրան, ի՞նչ հասկացրիք, որ նա նոյնպէս փոխուեց, սրգաց ու ողբաց...

Երկինքն էլ փոխուեց...

Կուրացէ՛ք, աչէ՛ր...

Զքնաղ աղջիկը, բնութեան ամենահրաշալի ստեղծագործութիւնը իր նազելի հասակով, իր փարթամ կըրծքով, իր անմե՞ղ, գրաւի՞չ աչիկներով ու մանկական մաքո՞ւր ու անարատ սրտով գերեց ձեզ... Դուք մոռացաք ամեն ինչ, թողիք բոլորը հանդիստ, և՛ դարուն, և՛ ծաղիկ, և՛ գետ, և երկինք... մոռացաք բոլորը և ձեր աւերիչ հայեացքի ամբողջ թափը կենդրոնացրիք նրա պայծառ աչերում...

Կասես՝ մի ամեհի ցաւ, մի դառը կրսկիծ, մի թունաւոր օձ բուն դրեց նրա կուսական կրծքում... Ալ-վարդ այտերը դեղնեցին, հրճուող սրրտից «ախ ու վախ» եր դուրս թրռան և օրէցօր մաշեցի՞ն, կերան այդ շքեղ հրաշալիքը. անլաց աչերից յորդ արցունքներ թափուեցան...

Օ՜, դուք, անգութ աչէ՛ր, ի՞նչ, ի՞նչ հասկացրիք նրան. թո՞յն կաթացրիք նրա քնքուշ սրրտի մէջ, կամ թէ սիրոյ նետը այնտեղ շա՞տ խորը մրխեցիք, որ այդ անհոգ, անբի՞ծ, չարաճճի էակին սգոյ չաստուածուհի դարձրիք... խլեցի՛ք նրա կենսատու արևը, սևացրիք նրա երջանիկ օրը, ինչպէս դուք էիք սև...

Կոյսն էլ ծեզանից երես շուռ տուեց...

Կուրացէ՛ք, աչէ՛ր...

1903 թ. 30 Յուլիսի.
Ղզլար։

III.

ՍՊԱՍՈՒՄ ԷՐ...

Դու առաջարկեցիր մի բան նկարել քո ալբոմում և ես նկարեցի մի սքանչելի գեղեցկուհու պատկեր, որը իր ամբողջ գծերով, իր չքնաղ կազմուածքով ներկայացնում էր հանգի՞ստ, սպասողական դրութիւն...

Նրա աչքերի մտածկո՞տ, դրաւիչ հայեացքը ուղղուած էր դէպի շա՞տ հեռուն, դէպի անորո՞շը...

Եւ տակին գրեցի «սպասում է»...

Հասկացա՞ր դու այդ պատկերի միտքը այն ժամանակ, թէ ոչ. այդ ինձ յայտնի չէ...

Այդ պատկերը սիրաս էր... սիրաս՝ որ այն ժամանակ ճիշտ այդ գեղեցկուհու պէս իր հայեացքը յառել էր դէպի հեռուն, դէպի քեզ և սպասում էր մի քաղցր, մի գուրեկան, անյա՛յտ, անհասկանալի բանի...

Այդ սէրն էր, որ դու պարգևեցիր նրան, նաղելի՛ս...

Եւ ես այն ժամանակ նկարեցի սիրաս, որ սպասում էր քեզ...

1903 թ. 25 Օգոստոսի.
Ղզլար.

IV.

ՀՐԱՇԱԼԻ ՊԱՏԿԵՐԸ

Երբ գիշերները յոգնած ու թուլացած պառկում եմ անկողնուս վրայ վշտերից հանգիստ գտնելու, սենեակումս, խաւարի թագաւորութեան մէջ, բաց աչքերիս առաջ մի հին, շա՞տ հին սիրելի ու պաշտելի պատկեր է կենդանութիւն առնում...

Հազիւ թէ թեթև քունը փակում է թերթերունքներս և ահա պաշտելի պատկերը երազներիս առանցքն է կազմում...

Առաւօտեան վաղ երազներս օդն են ցրնդում, չքանում է ամէն ինչ, բացի այն չքնաղ պատկերից, որ գեղեցի՞կ, սև՞ ու սիրուն աչիկներ էր կրում իր շուշանի պէս գուրեկան դէմքի վրայ...

Ո՛չ մի նկարիչ իր ճարտար վրձինով, հազար ու մի գոյնի ներկերով դեռ չէ՛ կարողացել ստեղծել այդ պատկերի պէս մէկը, որ նրա պէս քնքուշ, նրա պէս հրաշալի, նրա պէս սիրելի ու պաշտելի լինէր ինձ...

Բայց աչքերս նկարեցին...

Սիրաս կտաւն էր, սէրս՝ վրձինը ու

վիշտը՝ ներկը... և այդ հրաշալի պատկերը այնքան խնամքով է նկարուած, որ երբէք, երբէք չի՛ փչանալու, չի՛ մաշուելու...

Ու ես սիրուհուս ամենահրաշալի պատկերը խնամքով պահում եմ ժողովումս, կրծքիս տակ, սրտիս խորունկ ծալքերի մէջ...

1903 թ. 2 Օգոստոսի.
Ղզլար։

V.

ՓՈԹՈՐԿԻՑ ՑԵՏՈՑ ԺՊՏԻԴ ԵՄ ԿԱՐՕՏ...

Խէթ հայեացքդ սոսկալի կայծակի պէս սիրտս լուսաւորեց և ահաւոր լոյսի մէջ ցոյց տուեց, թէ որքան խորն է վիշտս և այդ խորունկութեան մէջ որքան ահաւոր ու սարսափելի...

Խէթ հայեացքդ ինձ համար փոթորկի այն ահարկու շանթերից մէկը դարձաւ, որ պիշերուայ մութ ու խաւար ժողովում շանթելով գետին է տապալում հաստաբուն կաղնին և այրում նրան...

Դու՝ որ իմ անապատ կեանքում կարկաչուն առուակի նման պիտի հոսէիր և ես անապատի տօթից այրուած պիտի մօտենայի ծարաւած սիրտս հովացնելու քո զով-ծոցումս, քո ալիքաւոր կրծքի վրայ, դո՛ւ, դու այն երեկոյ մարմարիոնի արձանի պէս լուռ ու անշարժ նստած էիր շուրջդ պարող հանդիսականների մէջ...

Մարմարիոնի պէս գեղեցիկ ու շքեղ էիր, մարմարիոնի պէս լուռ ու անխօս, մարմարիոնի պէս պաղ ու սառը և այդ մարմա-

րիոնէ արծանի վրայ միակ կենդանին ու շարժունը աչքերդ էին, որ թշնամաբար մեխուած էին աչքերիս և խէթ հայեացքով լացացնում էին նրանց...

Խէթ հայեացքդ տապալեց իմ յոյսերս, ինչպէս կայծակը դարևոր կաղնուն, և այրեց ու մոխիր դարձրեց նրանց...

Քեզանից ծաժուկ, ծաժուկ և բոլոր մարդկանցից ես լացի... լացի սևաւոր սրրտիս վրայ, ուր պիտի աւերակների մէջ բուերը սգոյ «վայեր» բարձրացնեն և խոս բրլբուլը պիտի հեռանայ՝ սիրոյ վարդը խանձուած տեսնելով...

Օ՜, խղճայ ինձ, Սիրուհի՛ս... Փոթորկից յետոյ ժպիտ եմ կարօտ...

1903 թ.
Ղզլար։

VI.

ԵՒ ԵՍ ԵՐԿՈՒՐ ՍՊԱՍԵՑԻ...

Եւ ես երկար սպասեցի, որ ահա դու կը ժպտիս ու քո հրաշալի ժպտի ճառագայթներից մէկը նորից կը թափանցէ սրրտիս խորքը, ուր խաւարը խրտացել ու թանձրացել է, ուր մահուան հառաչներ են լսւում և այնտեղ նորից սիրոյ փրրկարար, ողևորող կրակը կը վառէ...

Եւ ես երկար սպասեցի, որ շրրթունքներդ կը մօտենան ահա սառչող շրրթունքներիս և նորից շունչ ու կեանք կը տան մարող աւիւնիս...

Բայց ափսոս, հաղար ափսոս իմ վառ յոյսերիս, որ չար-մարդիկ ոտնատակ տուին, կողքրտեցին ու անցին վրայից...

Իսկ դու դեռ արշարժ, անորոշ կանգնած նայում ես սիրովդ շղթայուած դերուն, թէ ինչպէս դահիճներս պիտի այրեն, մոխիր դարձնեն...

Եւ այդ դուցէ քեզ զարհուրելի պատճառի... անգութ...

1903 թ.
Ղզլար։

VII.

ՅՈՅՍԵՐՍ ՄԱՐԵՑ ՅԱՒԻՏԵԱՆ...

Մտաբերում եմ այն հրաշագեղ, անամպ գիշերը, լուսնի դողացող լոյսը, աստղերի բացխփիկ խաղը, երբ ես՝ դեռ չը ճաշակած կեանքի թոյնը, հրճւանքով նայեցի աչքերիդ, երբ սրտիս մէջ յարութիւն առան և հաւատ, և սէր...

Այն գիշերին սրբազան գեղեցկութեամբ շնչում էր ողջ բնութիւնը... բաղդաւորութեան հուրը բոցավառւում էր մեր ըղմայլւած սրտերում և մենք հաւատում էինք, որ մօտ է աղա՞ա, երջանիկ կեանքի գեղածիծաղ արշալոյսը և մեզ թւում էր՝ թէ աշխարհը փայլում էր նրա ճառագայթների տակ...

Բայց այն օրերը անցա՞ն, դնացի՞ն, թրռա՞ն ինչպէս թեւաթեւիկ քամին...

Եկան նո՞ր օրեր, ուրի՞շ օրեր և ես վրշտի մէջ մաշւեցի...

Էլի նո՞ր գիշերներ եկան, նոր ապաւորութիւններ ստացւեցին, բայց անցածը նորից հոգուս մէջ վերակենդանացնել չը կարողացան...

Նորից առաջւան պէս փայլում էր լուսինը դողացող լոյսով, կրկին երկնքի պայծառ աչերը հեռւում առկայծում էին նախկին շողերով, դարձեալ նոյն դերող ու կաշկանդող անդորրութեամբ հանդիստ շնչում էր բնութիւնը և երկիրը քաղցր թմրութեան մէջ առաջւան պէս ննջում էր խաղաղ...

Օ՜, մենակ ես էի դարհուրելի՜, ահաւո՜ր, մենակ ես էի այդ չքնաղ պատկերի միջից ջոկւում, մենակ ես էի խորթ իմ մռայլ ուլացող դէմքով...

Եւ այդ չքնաղ գիշերը շատ ահաւոր դաղտնիքներ շշնջաց իմ ականջներիս... Խլեց սրտիս խորքերից ուրախութեանս վերջին մնացորդները, յուժկու ցաւերով իմ հոգին լցրեց ու իմ գեղեցիկ, մաքուր յոյսերը մարեց յաւիտեան...

1903 թ. 2 Սեպտ.
Ղզլար։

VIII.

ԿԵԱՆՔԻ ԾԱՂԻԿԸ

Նայում եմ այնտեղ — աչքերիս առաջ պատկերանում է մարդկային կեանքի ամբողջ շրջանը։

Աջ կողմում նստած է ժպտալի կեանքը գարնան թարմութեամբ, անուշ բուրմունքով, մէջտեղում կանգնած է անհոգ, թեթևաթևիկ ժամանակը, իսկ ձախ կողմում պրպղած է մահը կնճռոտ, դաժան դէմքով ու սարսափ ազդող աչքերով...

Կեանքի թելի կրծիկը, որ դանուում է ժամանակի ձեռքում, կապում է այդ երեքին միմեանց հետ...

Ժամանակը սահում է — և կծիկը բացուում. կեանքը ծնուում է ու ծաղկում գարնանային թարմութեամբ բուրող գեղեցիկ կոյսի ղրկում և ապա դաժան մահուան սուր մրկրատից կտրուելով՝ թառամած գետին է փռուում կեանքի չքնաղ ծաղիկը — մարդը։

ՑԱՆԿ

	երես.
Ղարիբի երգը	1
Որքան ուզեցի (յառաջաբանի տեղ)	5
Օ՜, հեռու ինձնից	6
Մօրս ցաւը	7
Մօրս կենացը	8
Մայրիկ հերիք է	9
Գիժ Քասախի ափին	11
Հովերն ընկան	12
Եարս	13
Ռ. Ա.-ին	14
Օր. Մ.-ին	15
Ժողովրդ. մօտ. «մուրհասաւ»...	16
Ես կոկոն եմ	17
Աշնան երգերից	18
Օր. Ե.-ին	19
Ես մեռնում եմ	20
Ընկերիս	21
Դժբախտի զարունը	22
Ես սիրեցի	23
Դարավերջին	25

Ղարիբի գարունը 27
Էն գիշերին 28
Ո՜հ, լռէ՛, սոխակ 29
Հայ աշուղին 31
Քէ՛զ, ով իմ ընկեր 33
Զոր Ծաղիկ 34
Ո՜հ, իզուր մի՛ 36
Ղարիբի երգը 38
Օ՜, Ծով մայր իմ 39
Հայ զորձիչին 40
Ես երգեցի 41
Գամառ-Քաթիպայի յիշատակին 42
Վրէժ 44
Էն կաթիլը 45
Ծանր, սև գարշեր 46
Շուշի՛կ, աղջիկ 49
Նրա պլբոմում 52
Իմ ասաղը 53
Երէկ 54
Օր. Մ. Կարապետեանի պլբոմում . . . 55
Սոխակն ու ես 56
Երկուսից մէկը 58
Մի՞թէ 60
Որքա՜ն սիրուն ես 61
Հսկայ ցաւերով 62
Ընկերիս 63
Գրչի զինուորը 64
Ոչ ասաղը գիտէ 65
Փշրանքներ 66
Էն գիշերին 73
Ժողովրդական մօտիւներից I 74
» » II 75
» » III 76
Էն կարմիր գարնան 78
Սև ագռաւը 79
1902 թ. 13-ն նոյեմբերի 81
Արդարութեան ձայնը 82
Նրան 83
Միայն քեզ եմ 84
Սիրեցիր զու ինձ 85
Քո՛յր իմ 86
Էլ մահուան համար... 87
Նորից երջանիկ 88
Քրիստոս յարեաւ 89
Ի՜նչ, զու ծանծրացա՞ր 90
Ջան գիւլում I 91
» » II 92
Թող գողայ 94
ԾՈՎԻ ՍՓԵՐՈՒՄ.
I. Ծովափեայ գիշեր 95
II. III Ծովափին 96
IV. Գոռում էր ծովը 98

V. Աստղ աչերը 99
VI. Աստղոտ գիշեր է 100
VII. Կատաղած ժովին 101
Մի՛ հրճւիր երբէք 102
Ծիծաղ ու արցունք I և II 103
Դատարկիւն ընկեր... 105
Մարանչի՛ր, մեռի՛ր 107
Օ՜, եթէ ճայթի 109
Իմ սէրը 110
Քուր ջան 111
Սիրաս ուզեց 112
Ա՜խ, անսի՛րտ եար 113
Ա՜խ, զուր, ես զուր մանկուդամ . . . 114
Ա՜խ, մօրս աւէ՛ր 115

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԷՅՆԷԻՅ I. Դու, ձկնորսի 119
II. Մտայ այնտեղ 120
III. Ա՜խ, քո կարմիր 121
IV. Ես էլ ունէի 122
V. Վաղո՞ւց է, որ 123
VI. Երբ ես նստած եմ . . . 124
ՏԻԻՏՉԵՒԻՅ. I. Կրկին մխում է . . . 125
II. Արցունք մարդկային . 126
ԼԵՐՄՈՆՏՈՎԻՅ. I. Ես չեմ ցանկանում . 127
II. Թամարա 128
ՆԱԴՍՕՆԻՅ. I. Ինձ մի՛ ասէք 131
II. Թարմ գերեզմանի առաջ 132

ՓՆՋԻԿ

I. Ուզեցի քեզ մոռանալ 135
II. Կուրացէ՛ք, աչե՛ր, ... 137
III. Սպասում էր 140
IV. Հրաշալի պատկերը 141
V. Փոթորկից յետոյ ժպտիդ . . . 143
VI. Եւ ես երկար սպասեցի . . . 145
VII. Յոյսերս մարեց՝ յաւիտեան . . . 146
VIII. Կեանքի ծաղիկը 148

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Ում ՀՍՍՀ
Ա. ԱԿ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0348926

Арм.
2-38

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

4080